

ԱԶԴՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՁԱՅՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ՝ ՀԱՆՈՒՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԸՆԴԴԵՄ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԿՈԱԼԻՑԻԱ





**Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից**



Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի հեղինակային խումբը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Չեղինակային խումբ՝

- Նվարդ Մանասյան, համակարգող
- Էդիտա Խաչատրյան, հետազոտող
- Յոնիսիմե Օհանյան, հետազոտող
- Լիլիթ Թալալյան, հետազոտող
- Տաթև Ձիջյան, խմբագիր (անգլերեն)
- Գայանե Ղազարյան, թարգմանիչ և խմբագիր

ISBN 978-9939-9295-8-3



9 789939 929583

ՀՏԴ316.42

ԳՄԴ 60.524

ISBN- 978-9939-9295-8-3

©2024 – Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա:

Բոլոր իրավունքները պաշտպանված են.

Արտոնագիր՝ Եվրոպական միություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ	2
ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓԱԳԻՐ	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ՀԱՄԱՏԵՔՍ	6
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	10
Հիմնարկեքը	10
Բովանդակության հղկումը	12
Փորձարկումը և հաստատումը	13
ԱԶԴԵՑԻԿ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄ	14
Սցենար 1. Տեղեկացնել և ուղղորդել	15
Սցենար 2. Աղ ունե՞ս	21
Սցենար 3. Տունը դարձնենք անտառից անվտանգ	26
Սցենար 4. Իմացի՛ր գենդերային բռնության տեսակները	32
Սցենար 5. Բա դու՞ ով ես	36
Եզրակացություն	39
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	41

ԵՐԱՒՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան իր խորին երախտագիտությունն է հայտնում Ամասիա Նիզիբյանին՝ Կանանց ռեսուրսային կենտրոնից, և Հասմիկ Գրիգորյանին՝ Կոալիցիայից, Հայաստանի երեք քաղաքներում նախատիպերի ստեղծման ֆասիլիտացիայի հարցում նրանց անգնահատելի աջակցության համար: Մեր շնորհակալությունն ենք հայտնում նաև Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների մագիստրատուրայի ուսանող Հռիփսիմե Օհանյանին, Հայաստանի ֆրանսիական համալսարանի մարքեթինգի բաժնի բակալավրիատի ուսանող Էդիտա Խաչատրյանին և Հայաստանի ամերիկյան համալսարանի «Քաղաքականություն և կառավարում» մասնագիտության բակալավրիատի ուսանող Լիլիթ Թալալյանին՝ տվյալների վերլուծության և գեկուլցի մշակման գործում նշանակալի ներդրման համար: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Կահիրեի ամերիկյան քոլեջի կամավոր և ավագ դպրոցի աշակերտ Տաթև Ջիջյանին, որը վերլուծության ընթացքում մեծապես նպաստել է տեքստի խմբագրմանը և տրամադրել արժեքավոր դիտարկումներ: Վերջապես, այս վերլուծությունը չէր գտնի իր ընթերցողին առանց Գայանե Ղազարյանի բարձրորակ թարգմանության և մանրակրկիտ խմբագրական աշխատանքի:

Կամենում ենք նաև շնորհակալություն հայտնել Սայմոն Ֆորեսթերին և Ելենա Պալիվոդային՝ իրենց մեկնաբանությունների և աջակցության համար, որոնք վճռորոշ եղան նախատիպացումը հնարավոր դարձնելու գործում: Երախտապարտ ենք նաև GDSI Limited-ին ԵՄ-ի Արևելյան գործընկերության շրջանակներում «Քաղաքացիական հասարակության կարողությունների զարգացմանն ուղղված տարածաշրջանային տեխնիկական աջակցություն» ծրագրով՝ Կոալիցիայի համակարգող Նվարդ Մանասյանին կրթաթոշակ տրամադրելու համար, ինչով կյանքի կոչվեց այս ծրագիրը:

Եվ վերջապես, Կոալիցիան իր խորին երախտագիտությունն է հայտնում Երևանի, Գյումրիի և Վանաձորի 37 երիտասարդ կանանց ուսող ամարդկանց, որոնք մասնակցեցին ֆոկուսխմբային քննարկումներին. ձեր ներգրավվածությունն ու դիտարկումներն անգնահատելի եղան 16-օրյա քարոզարշավի ուղերձները ձևակերպելու հարցում:

ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Այս զեկույցը գենդերային բռնության (ԳԲ) տարբեր կողմերն արտացոլող հինգ սցենարի համապարփակ ակնարկ է, որի նպատակն է բարձրացնել իրազեկությունը, խրախուսել միջամտությունը և խթանել կոլեկտիվ գործողությունները: Սցենարները մշակվել և նախատիպացվել են Հայաստանի երեք քաղաքներում՝ Երևանում, Գյումրիում և Վանաձորում բնակվող երիտասարդ կանանց ու տղամարդկանց հետ ֆոկլորալիստիկ քննարկումներով (\$ԽՔ): Այս քննարկումներից ստացված արձագանքներով ձևավորվել են սցենարների վերջնական տարբերակները, որոնց նպատակն է մղել խորհրդածելու և գործելու:

Առաջին սցենարն ընդգծում է արդյունավետ փոփոխություններ բերելու գործում **միասնության կարևորությունը**: Սցենարը տեղեկատվական խտապակերի միջոցով դիտողներին խրախուսում է իրազեկել բռնության մասին և շեշտում հավաքական գործողությունների ուժը: Այնուամենայնիվ, արձագանքները ցույց տվեցին, որ սցենարը կարող է օգուտ քաղել բռնության պատճառների ավելի խորը ուսումնասիրությունից՝ հանդիսատեսին տրամադրելով ավելի կոնկրետ փաստարկներ, թե ինչու է անհրաժեշտ դադարեցնել բռնությունը: Այս մոտեցումը կուժեղացնի պատումը՝ դուրս գալով իրազեկումից անդին՝ դեպի բռնությունը կանխելուն անհրաժեշտ գործողությունների ուսումնասիրություն:

Երկրորդ սցենարը ցույց է տալիս **միջամտության կարևորությունը**: Այն պատկերում է մի տղամարդու, որը հարևանի տնից լսում է բռնության ձայներ և մտածում՝ արդյո՞ք միջամտի, թե՞ ոչ: Ի վերջո, որոշում է դուռը թակել՝ աղ խնդրելու պատրվակով: Արձագանքներն ընդգծեցին, որ նույնիսկ այսպիսի փոքր միջամտությունները կարող են ազդեցիկ լինել: Այնուամենայնիվ, մտահոգություն հնչեց անավարտունության վերաբերյալ, քանի որ մասնակիցները ցանկանում էին ավելի շատ բան իմանալ, թե ինչ կլինի հետո: Այս հարցը լուծելու համար սցենարը վերանայվեց՝ ընդգծելու, որ միջամտությունը սկսվում է փոքր գործողություններից և հնարավորություններ է բացում թե՛ զոհերի, թե՛ ականատեսների հետագա խորհրդածության և գործողության համար:

Երրորդ սցենարը, որ կոչվում է **«Տներն անտառներից անվտանգ դարձրեք»**, ուշադրություն է հրավիրում այն մտահոգիչ իրականության վրա, որ շատ կանայք իրենց ավելի ապահով են զգում մեկուսի վայրերում, ինչպիսիք են անտառները, քան սեփական տներում: Այս ազդեցիկ այլաբանությունը համակցվեց Հայաստանում ընտանեկան բռնության վիճակագրությանը, ինչը խոր արձագանք գտավ մասնակիցների շրջանում: Այնուամենայնիվ, ոմանք համարեցին, որ տեսողական

բնապատկերները հստակ չեն փոխանցում անվտանգության և վտանգի ենթադրվող հակադրությունը: Այս խնդիրը լուծելու համար ավելացվեցին բռնության ֆոնային ձայներ՝ սաստկացնելու տան պայմաններում սպառնալիքի զգացումը՝ միաժամանակ կենտրոնանալով ԳԲ-ի լուծումների վրա:

Չորրորդ սցենարն անդրադառնում է **բռնության տարբեր ձևերին**, որոնց առնչվում են կանայք: Այն պատկերում է մի կնոջ, որը թվարկում է բռնության տարբեր տեսակները՝ ընդգծելով, որ փոփոխությունը պետք է սկսվի անհատներից: Թեև սցենարն արդյունավետ ընդգծում էր բռնության բազմակողմ բնույթը, ցուցակատիպ կառուցվածքն ընկալվեց որպես ճնշող: Այն չունեի հստակ բացատրություն, թե ինչպես պայթարել կամ դիմակայել բռնության այս ձևերին, ինչն էլ թուլացրեց ուղերձի ազդեցությունը: Այս արձագանքների հիման վրա սցենարն ի վերջո հանվեց, որպեսզի Կոալիցիան շարունակի կենտրոնանալ բռնության ոչ բացահայտ, բայց ազդեցիկ պատկերման վրա:

Վերջին սցենարը, որը տեղի է ունենում բարում, շոշափում է **սեռական բռնության** և հասարակական տաբուների խնդիրը: Այն պատկերում է մի երիտասարդ կնոջ, որը միջամտում է, երբ անձանոթ տղամարդը փորձում է բարից դուրս տանել ակնհայտորեն հարբած մի կնոջ: Սցենարը մարտահրավեր է նետում մշակութային նորմերին՝ հստակ արձանագրելով, որ սեռական բռնության մեղավորները ոչ թե զոհերն են, այլ բռնարարները: Թեև այս սցենարը հանգուցալուծման բացակայության և փոխազդեցությունների անորոշության պատճառով որոշ քննադատության արժանացավ, ի վերջո, պահպանվեց՝ գենդերային նորմերին սադրիչ մարտահրավեր նետելու և այն պնդման համար, որ սեռական բռնությունը չունի արդարացում:

Ընդհանուր առմամբ՝ հինգ սցենարներն արտացոլում են գենդերային բռնության տարբեր ձևեր՝ առաջարկելով լուծումներ, թե ինչպես վարվել և միջամտել նման իրավիճակներում, ինչպես նաև՝ բարձրացնել դրանց մասին իրազեկությունը: Յուրաքանչյուր սցենար առաջ է քաշում ԳԲ-ի վերաբերյալ մի առանձին դիտանկյուն՝ խրախուսելով դիտողներին խորհրդածել բռնության կանխարգելման և զոհերին աջակցելու մեջ իրենց դերի մասին:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան Հայաստանում գեղեցիկ է բռնության մասին իրազեկության բարձրացման նպատակով ուսումնասիրել է Մարդակենտրոն դիզայնի (ՄԿԴ, Human-Centered Design) կիրառումը: Այն հատկապես կենտրոնացել է Երևանում, Գյումրիում և Վանաձորում ապրող երիտասարդ կանանց ու տղամարդկանց կենդանի փորձառությունը, կարիքներն ու մարտահրավերները հասկանալու վրա: Չեկույցը քննում է, թե ինչպես է ՄԿԴ-ն իր ապրումակից և մասնակցային մոտեցմամբ օգնում ստեղծել ավելի արդյունավետ և ազդու ուղեքններ, որոնք անմիջականորեն դիպչում են լսարանի իրականությանը: Վերլուծելով այս քաղաքներում ֆոկլորաբանական քննարկումներով վերհանված՝ գերիշխող կոնկրետ սոցիալական դիսամիկան և գեղեցիկ է նորմերը՝ այս նախագիծը ձգտում է ընդգծել ՄԿԴ-ի՝ մասնակցային միջոցներով նորմերի փոփոխությանը նպաստելու ներուժը:

ՀԱՄԱՏՔԱՍ

Կանանց նկատմամբ բռնությունը մարդու իրավունքների ոտնահարման ամենատարածված ձևերից է: Աշխարհում յուրաքանչյուր երրորդ կին ենթարկվում է բռնության¹: Գենդերային բռնությունը բնութագրվում է որպես բռնություն, որը սեռի հիմքով հատկապես ուղղված է կանանց դեմ, կամ անհամաչափորեն կիրառվում է կանանց հանդեպ²: Գենդերային բռնությունը հանգեցնում է բազմաթիվ բացասական հետևանքների՝ ներառյալ ֆիզիկական, սեռական, հոգեբանական և տնտեսական վնասի կամ տառապանքի, ինչպես նաև կնասպանության (ֆեմիցիդի): Դա բացասաբար է ազդում բռնության ենթարկված կանանց իրավունքների իրացման, նրանց առողջության և տղամարդկանց հավասար հասարակական և անձնական կյանք ունենալու կարողության վրա: Ընտանեկան բռնությունը, որպես գենդերային բռնության ձև, հաճախ դրսևորվում է որպես կանանց նկատմամբ խտրականություն՝ լրջորեն խոչընդոտելով գենդերային հավասարության հաստատմանը և ամրապնդելով խտրական գենդերային դերերն ու ընկալումները հասարակության մեջ:

Հայաստանում ԳԲ-ի դեպքերի վիճակագրությունը տազնապալի է: 2021թ. ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից 15-59 տարեկան աղջիկների և կանանց շրջանում անցկացված հետազոտության համաձայն՝ երբևէ զուգընկեր ունեցած կանանց 14,8%-ը ենթարկվել է ֆիզիկական, 13,1%-ը՝ միջին, իսկ 5,5%-ը՝ դաժան բռնության: Բացի այդ, 31,8%-ը ենթարկվել է հոգեբանական, իսկ 6,6%-ը՝ սեռական բռնության: Ըստ նույն հետազոտության տվյալների՝ վերջին մեկ տարում կանանց 3,5%-ը ենթարկվել է ֆիզիկական, 13%-ը՝ հոգեբանական, 1,9%-ը՝ սեռական բռնության³:

Սոցիալական նորմերն ազդեցիկ դեր են խաղում ԳԲ-ի տարբեր ձևերի պահպանման և փոխանցման գործում: Ինչպես ցանկացած այլ հայրիշխանական հասարակությունում, Հայաստանում նույնպես ավանդական տղամարդկային ու կանացի գենդերային դերերը և գենդերային բռնությունը գերակշռող երևույթներ են (Ռուտա Այդիս, Սոնա Բալասանյան և Գոհար Շահնազարյան 2019թ., էջ 19):

1 Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, (2021թ., մարտի 9): Աղետալիորեն համատարած՝ աշխարհում 3 կնոջից 1-ը ենթարկվում է բռնության. <https://www.who.int/news/item/09-03-2021-devastatingly-pervasive-1-in-3-women-globally-experience-violence>

2 ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե (1992թ.) (CEDAW), ընդհանուր հանձնարարական N19, Կանանց նկատմամբ բռնություն, Refworld. <https://www.refworld.org/legal/resolution/cedaw/1992/en/96542>

3 Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե. (2022թ.). Կանայք և տղամարդիկ Հայաստանում, 2022թ.. <https://armstat.am/am/?nid=82&id=2487>

Այս պնդումը կարող է հիմնավորվել 2016թ. ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (UNPFA) կողմից Չայաստանում արված՝ ընտանեկան բռնության վերաբերյալ հետազոտության արդյունքներով, որոնք ցույց են տալիս, որ «երկու սեռերի շրջանում առկա է զուգընկերոջ բռնությունն ընդունելի համարելու բարձր մակարդակ՝ հավելելով, որ տղամարդկանց 66%-ը և կանանց 63%-ը նշել են, որ «եթե կինը դավաճանում է ամուսնուն, վերջինս կարող է հարվածել նրան»»: Չետազոտությունը եզրակացնում է, որ «բռնության իրական տարածվածությունն ավելի ցածր է, քան նման բռնության ընդունելիության տարածվածությունը» (UNFPA, 2016; Guntzberger, Kostelny, & Ondoro, 2017):

Նմանապես, 2023թ. Վրաստանի ողջ հասարակության շրջանում անցկացված՝ ընտանեկան բռնությանն առնչվող սոցիալական նորմերի վերհանմանն ուղղված հետազոտությունը ցույց է տվել, որ «կանանց ընդամենը 1.8%-ը և տղամարդկանց 3.8%-ն են կարծում, որ ամուսնու կողմից կնոջը հարվածելը կամ ծեծելն ունի արդարացում: Միևնույն ժամանակ, ընտանեկան բռնության վերաբերյալ կանանց ու տղամարդկանց ընկալումները դեռևս տարբերվում են նրանով, որ, ի հակադրություն տղամարդկանց ընդամենը 57.5%-ի, կանանց 77.6%-ն է դա համարում լրջագույն խնդիր» (UN Women, 2023): Չետազոտությունը եզրակացնում է, որ դեռևս մեծ է հասարակության տարբեր շերտերը կազմող հանրույթների իրազեկությունը բարձրացնելու, փաստահենք քաղաքականություններ մշակելու և շահերի պաշտպանությամբ զբաղվող ծառայությունները՝ դրա կարիքն ունեցողների համար բարելավելու անհրաժեշտությունը (UN Women, 2023):

Մարդակենտրոն դիզայնը գնալով ավելի շատ է օգտագործվում իրազեկության բարձրացման նպատակներով, քանի որ մարդկանց կարիքները, փորձառությունն ու տեսակետները դնում է նախագծման կենտրոնում՝ քարոզարշավները դարձնելով ավելի վերաբերելի, ազդեցիկ և արդյունավետ: Տեսականորեն՝ ՄԿԴ-ի մեթոդը սահմանվում է որպես «գործընթաց, որը մարդկանց դնում է ամեն ինչի կենտրոնում: Այն սկսվում է մարդկանց կարիքներն ու ցանկությունները հասկանալուց, այնուհետև անցնում է այդ կարիքները բավարարող ապրանքներ և ծառայություններ նախագծելուն» (Burns, 2018): Այս մեթոդը խրախուսում է ակտիվ մասնակցությունը, փորձարկումը և գաղափարների կատարելագործումը՝ հիմնված իրական հետադարձ կապի վրա՝ ապահովելով, որ վերջնարդյունքը բավարարի լսարանի իրական մտահոգությունները և դրդի քայլեր ձեռնարկելու: Չատկապես զգայուն հարցերին առնչվող իրազեկման քարոզարշավներում, ինչպիսիք են ընտանեկան բռնությունը, գենդերային հավասարությունը և հանրային առողջությունը, ՄԿԴ-ն օգնում է ստեղծել բովանդակություն, որը ոչ միայն տեղեկատվական է, այլև հուզականորեն տպավորիչ, և մարդկանց մղում է որդեգրել ուղերձը, ներկայացված սցենարներում տեսնել իրենց և ոգեշնչվել վարքագծերը փոխելու կամ գործին աջակցելու հարցում: Չաղորդակցման ռազմավարությունները

հարմարեցնելով մարդկանց կենդանի փորձառությանը՝ ՄԿԴ-ն երաշխավորում է, որ սոցիալական փոփոխություններ խթանելու գործում իրազեկության բարձրացմանն ուղղված ջանքերն ավելի ներառական, վերաբերելի և, ի վերջո, ավելի արդյունավետ լինեն:

ՄԿԴ-ն թիրախային բնակչության կամ շահագրգիռ կողմերի կարիքները հասցեագրում է երեք հիմնական փուլերով՝ ոգեշնչում, մտարկում (ideation) և իրականացում (Spencer, 2022): Սկզբնական՝ ոգեշնչման փուլում հետազոտողը սահմանում է նախատիպերի նախաշրջանակը և թիրախային լսարանը (Burns, 2018): Այս փուլն ամբողջովին վերաբերում է բացահայտելուն և «ըմբռնելուն այն պահանջմունքները, ցանկությունները, ինչպես նաև հիմքում ընկած խնդիրները, որոնք ամբողջանում են քննարկումներով ու երկխոսություններով կամ, այլ կերպ ասած, հետազոտական հարցազրույցներով» (Siricharoen, 2023): Ինչպես բացատրում է Սփենսերը. «Ապրումակցումը ոգեշնչման փուլի կենտրոնական մասն է, որը հետազոտողին հնարավորություն է տալիս երևույթը դիտելու թիրախային լսարանի աչքերով» (Spencer, 2022): Մտարկման փուլում հնարավոր լուծումները քննվում են ուղեղային գրոհով և ապա մաղվում՝ մինչև կմսան լուծումների այն գաղափարները, որոնք հավանաբար կարող են գործուն լինել թիրախային ողջ լսարանի համար (Spencer, 2022, Siricharoen, 2023): Այնուհետև լուծումները «ներկայացվում և հաստատվում են հիմնական լսարանի հետ: Այստեղ նպատակը գաղափարը ստուգելն է ու նրանցից անկեղծ արձագանք ստանալը: Այս գործընթացը կրկնվում է այնքան, մինչև ձևավորվում է հիմնավոր և իրատեսական լուծում» (Spencer, 2022, Siricharoen, 2023): Եվ վերջապես, ավարտական՝ իրականացման փուլում լուծումները ներկայացվում են թիրախային լսարանին, սակայն՝ իբրև նախատիպ, քանի որ դրա բարելավումը պահանջում է թիրախային լսարանի հետ մշտական հետադարձ կապ (Burns, 2018):

Այս հետազոտության համատեքստում կանանց և աղջիկների համար ակնկալվող օգուտն այն է, որ փոխհարցախույզի այս մեթոդը՝ իր բոլոր էթիկական նկատառումներով, ստեղծում է իրենց փորձառությունն ու տեսակետները բարձրաձայնելու անվտանգ ու ներառական տարածք: Այս մասնակցությունը երաշխավորում է, որ լուծումները ստեղծվեն ոչ միայն նրանց համար, այլ, ամենակարևորը, նրանց հետ:

Չնայած ՄԿԴ-ի մոտեցման արդյունավետությանը՝ այն ունի որոշ սահմանափակումներ, որոնցից են՝ կողմնակալության, համակարգային խնդիրներն անտեսելու և ոչ ճշգրիտ արդյունքներ ստանալու ռիսկերը: Կողմնակալության մասին. եթե փոխհարցախույզի փուլը չի կարողանում ճշգրտորեն արտացոլել թիրախային հանրույթի բազմազանությունն ու նրբությունները, լուծումները կարող են արտացոլել թիրախային հանրույթի միայն

et al., 2022): Բացի այդ, օգտագործողների կարիքների վրա գերկենտրոնացումը կարող է հանգեցնել ավելի լայն համակարգային խնդիրները և ինստիտուցիոնալ սահմանափակումները չնկատելուն՝ առաջ քաշելով լուծումներ, որոնք չունեն երկարաժամկետ կայունություն (Van Velsen et al., 2022): Եվ վերջապես, քանի որ ՄԿԴ-ի մոտեցման հաջողությունը մեծապես կախված է թիրախային լսարանի ակտիվ ու անկաշկանդ մասնակցությունից, կարևոր է, որ մասնակիցները չխուսափեն քննարկումներում ներգրավվելուց, իրենց իրական կարիքներն ու տեսակետներն արտահայտելուց կամ արձագանքելուց: Այն դեպքում, երբ մասնակիցները տարբեր պատճառներով, ինչպիսիք են վախը, խարանը կամ վստահության բացակայությունը, սկսում են խուսափել, հետազոտությունը կարող է արտացոլել ոչ ճշգրիտ արդյունքներ՝ հանգեցնելով ուսումնասիրվող խնդրի համար անարդյունավետ կամ անընդունելի լուծումների (Van Velsen et al., 2022):

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ապրումակցումը մարդկային խորքային գիծ է, և նաև՝ մարդակենտրոն դիզայնի առանցքային գաղափարը, որը մշակողների համար կենսական է՝ շահառուների կարիքները լիովին հասկանալու և հոգալու առումով: Այս մոտեցումը միայն մասնավոր ոլորտում դյուրօգտագործելի ապրանքներ ստեղծելու համար չէ. այժմ այն կիրառվում է նաև հանրային ոլորտում՝ բովանդակալից ապրանքներ, ծառայություններ և քաղաքականություն մշակելու համար: Ընդդեմ բռնության կոալիցիայի՝ 2024թ. 16-օրյա քարոզարշավում այս մեթոդաբանությունն ապացուցեց, որ անգնահատելի է ողջ Հայաստանով մեկ երիտասարդ կանանց ու տղամարդկանց շրջանում արձագանք գտնելու և նրանց՝ բռնությունից զերծ կյանքով ապրելուն հավատարիմ լինելու մեջ խրախուսելու գործում:

Կոալիցիայի որդեգրած ՄԿԴ-ի գործընթացը հիմնված էր IDEO-ի⁴ շեշտադրած սկզբունքների վրա՝ թափանցիկություն, ոգեշնչում, փոխակերպում, մասնակցություն, համատեքստ և կայունություն: Այս սկզբունքներն են առաջնորդել աշխատանքը, որը կազմակերպվել էր երեք հիմնական փուլերով՝ ոգեշնչում, մտարկում և իրականացում: Թեև IDEO-ն ընդունում է, որ ՄԿԴ-ն գծային գործընթաց չէ, այս կառուցվածքային մոտեցումը Կոալիցիային թույլ տվեց շահառուների հետ միասին արդյունավետորեն նախատիպել և համաստեղծել բովանդակություն:

ՀԻՄՆԱՐԿԵՔԸ

Ոգեշնչման փուլը ներառում էր սցենարների և սոցիալական մեդիայի ուղերձների մշակումը՝ հիմնված մարտահրավերների վերլուծության վրա, որոնց բախվում են երիտասարդ կանայք ու տղամարդիկ Հայաստանի երեք քաղաքներում՝ Երևանում, Գյումրիում և Վանաձորում:

Այս սցենարների և ուղերձների նպատակն էր՝ անդրադառնալ ականատեսի խնդրին՝ առաջարկելով հավանական լուծումներ, որոնք կարող են մղել գործողությունների: Կոալիցիայի նպատակն էր բովանդակությունը դարձնել

4 IDEO-ն համաշխարհային առաջատար դիզայներական ընկերություն է, որը հաջողությամբ կիրառել է ՄԿԴ-ն՝ ստեղծելով այնպիսի նորարարական ապրանքներ, ինչպիսիք են Palm pilots-ը և Oral-B ատամի խոզանակները: Տե՛ս՝ IDEO.org (2015): The field guide to human-centered design.; Brown, T., & Wyatt, J. (2010). Design thinking for social innovation. Development Outreach, 12, 29-43, etc.

վերաբերելի, արդյունավետ և իմաստալից՝ թիրախային լսարանի հույսերն ու ցանկությունները հասկանալու և բովանդակությունն այնպես հղկելու միջոցով, որ խոր արձագանք գտնի նրանց մեջ:

Չունիսին վերոնշյալ քաղաքներում 18-35 տարեկան երիտասարդ կանանց ու տղամարդկանց հետ անցկացվեցին \$ԽԲ-ներ: Քննարկումները վարում էր մի երիտասարդ կին՝ պահպանելով ոչ հիերարխիկ մթնոլորտ և ապահովելով, որ յուրաքանչյուր կարծիք սպասված լինի: Նա մասնակիցներին խրախուսում էր արտահայտել իրենց մտքերը, տպավորություններն ու կարծիքները հինգ սցենարների և տասնվեց ուղերձների վերաբերյալ՝ այն ըմբռնմամբ, որ չկան ճիշտ կամ սխալ պատասխաններ:

Վերոնշյալ քաղաքների ընտրությունն ուներ եռաշերտ հիմնավորում: Նախ, Երևանը՝ երկրի ամենամեծ քաղաքն է ու բնակչության կեսի բնակավայրը, սոցիալական նորմերի առումով ներկայացնում է յուրահատուկ դիսամիկա՝ հաճախ առաջ անցնելով Հայաստանի մյուս քաղաքներից: Գյումրին՝ մեծությամբ երկրորդ քաղաքը, որտեղ խորապես արմատացած են հայրիշխանական նորմերն ու պրակտիկաները, արտացոլում է ավելի ավանդական հասարակական կառուցվածք: Մինչդեռ Վանաձորը՝ երրորդ ամենամեծ քաղաքը, ունի նախկին արդյունաբերական կենտրոն լինելու իր պատմությամբ ձևավորված հստակ ինքնություն: Երկրորդ, սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը (gender-biased sex selection) գենդերային նորմերի նշանակալի ցուցիչ է, որն արտացոլում է որդի ունենալու նախապատվությունը: Ծննդյան պահին սեռերի բնական՝ 1,06 հարաբերակցության համեմատ՝ Երևանում, Գյումրիում և Վանաձորում այդ հարաբերակցությունը համապատասխանաբար կազմում է 1,09 (ամենացածրն է), 1,19 (ամենաբարձրն է) և 1,12 (միջինն է): Այս թվերը ցույց են տալիս, որ կանայք սահմանափակ գործորդություն ունեն իրենց սեռական ու վերարտադրողական առողջության և իրավունքների հարցում, քանի որ հաճախ նրանք չեն ընտանիքի պլանավորման վերաբերյալ որոշում ընդունում, և երեխայի սեռից կախված՝ կարող են հարկադրված լինել հղիությունն արհեստական ընդհատելու: Երրորդ, և՛ Երևանում, և՛ Գյումրիում առկա են Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի ներքո գործող կազմակերպություններ, որոնք ունեն համապետական և մարզային ազդեցություն՝ գենդերային բռնության դեմ պայքարելու և կանանց հզորացումը խթանելու գործում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀՂԿՈՒՄԸ

Մտարկման փուլը ներառում էր առկա սցենարները և սոցիալական մեդիայի ուղերձները հղկելու նպատակով թիրախային խմբերի հետ գաղափարների փորձարկում և գեներացում: Մասնակիցները բովանդակության և՛ ֆունկցիոնալությունը, և՛ հուզական ազդեցությունը գնահատեցին կիրառելիությունը և հուզական արձագանքը չափելուն ուղղված չափորոշիչների հատուկ գործիքակազմով:

Կիրառելի լինելու համար բովանդակությունը պետք է ունենար պարզություն, հստակություն և ազնվություն, բայց և միաժամանակ՝ լիներ համարձակ, ներառական ու տևական ազդեցություն թողնելու ունակ: Ֆունկցիոնալ չափորոշիչները կենտրոնացած էին այնպիսի կողմերի վրա, ինչպիսիք են նորույթը⁵, լեզվի հստակությունը⁶ և վերաբերելիությունը⁷, որպեսզի բովանդակությունը լինի դյուրըմբռնելի⁸ և մղի գործողության⁹: Հուզական կողմը գնահատվեց այնպիսի չափորոշիչներով, ինչպիսիք են դուրեկանությունը, հանգստաբերությունը¹⁰ և հարգալիրությունը¹¹ չափելու, թե բովանդակությունը մասնակիցների մեջ ի՞նչ արձագանք է գտնում անձնական մակարդակում:

Մասնակիցները կարդացին սցենարները և կանաչով նշեցին իրենց հավանած, իսկ կարմրով՝ չհավանած կամ չհասկացած մասերը: Այնուհետև քննարկեցին իրենց ընտրությունը՝ հայտնելով իրենց տեսակետները, թե ինչն է աշխատել, և ինչը կարիք ունի բարելավման: Ֆասիլիտատորը ներկայացրեց պնդումներ՝ չափելու կիրառելիությունը և հուզականության շերտերը՝ օգտագործելով Լիթերթի 5-բալանոց սանդղակը, որպեսզի գնահատի բովանդակության հիմնային չափորոշիչները: Այս քննարկումները ձայնագրվեցին և սղագրվեցին հետագա վերլուծության համար:

5 Shin, G., Feng, Y., Hossein Jarrahi, M.H., Gafinowitz, N., Beyond novelty effect: a mixed-methods exploration into the motivation for long-term activity tracker use, JAMIA Open, 0(0), 2018, 1–11; Schmidt, M., Tawfik, A. A., Jahnke, I., Yvonne Earnshaw, Y., Learner and User Experience Research, An Introduction for the Field of Learning Design & Technology, 2021

6 Işık, A. ELT Materials Evaluation: A System and Criteria, Theory and Practice in Language Studies, Vol. 8, No. 7, pp. 797-812, July 2018

7 Leise, F. Content Analysis Heuristics, March 12, 2007, at boxesandarrows.com

8 Guidelines for pretesting and evaluating communication materials, The Ministry of Health (MoH), Zambia (Comprehension)

9 Willaims R. How to test content like a pro: A step-by-step guide, a [blogpost](#) at maze.com

10 Petrie, H. L., Bevan, N., The Evaluation of Accessibility, Usability, and User Experience, The Universal Access Handbook, C Stepanidis (ed), CRC Press, 2009

11 Petrie, H. L., Bevan, N., The Evaluation of Accessibility, Usability, and User Experience, The Universal Access Handbook, C Stepanidis (ed), CRC Press, 2009

ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Բարելավված բովանդակությամբ նախատիպերն իրականացման փուլում փորձարկվեցին Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) անդամների հետ: Այս քայլը որոշիչ էր՝ համոզվելու, որ բովանդակությունը ոչ միայն տեսականորեն հիմնավոր է, այլև իրական կյանքում գործնականորեն կիրառելի:

Եվ վերջապես, հաստատման փուլը ներառում էր երիտասարդ արվեստագետներից կազմված թողարկող թիմ, որը հավաքագրվել էր քարոզարշավի տեսահոլովակները ստեղծելու համար: Թիմը վերլուծեց հղկված սցենարներն ու ուղերձները՝ համեմատելով սկզբնական նախատիպերի հետ՝ համոզվելու, որ համապատասխանում են քարոզարշավի նպատակներին: Այս փուլը միախառնվեց նախաթողարկման աշխատանքների հետ՝ ներառյալ քասթինգը, տեղանքի ընտրությունն ու նկարահանումների ժամանակացույցի ստեղծումը, և այս բոլորը՝ հիմնված հաստատված բովանդակության վրա:




ԱՋԴՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄ

Ողջ գործընթացը՝ ոգեշնչումից մինչև իրականացում, նախագծված էր երաշխավորելու, որ քարոզարշավի բովանդակությունը լինի և՛ ազդու, և՛ իմաստալից: Երիտասարդ կանանց ու տղամարդկանց ներգրավելով սցենարների և ուղերձների ստեղծման ու հղման մեջ՝ Կոալիցիան կարողացավ ստեղծել բովանդակություն, որը խորարձագանք գտավ թիրախային լսարանում՝ ոգեշնչելով հավատարիմ լինել բռնությունից զերծ կյանքին: Ֆունկցիոնալ և հուզական վերլուծության համադրումն ապահովեց համապարփակ ըմբռնում, թե ինչպես է բովանդակությունն աշխատելու՝ երաշխավորելով դրա վերաբերելիությունն ու արդյունավետությունը: Այս զեկույցում քննարկվում են միայն սցենարները՝ դուրս թողնելով ուղերձների փորձարկման և հետադարձ կապի գործընթացը:

1. Տվյալների վերլուծություն

Ընդհանուր վերլուծություն



Ընթերցողներին հանձնարարվեց տեքստում կատարել կանաչ և կարմիր նշումներ. ԿԱՆԱԶԸ՝ դյուրըմբռնելի և դուրեկան, իսկ ԿԱՐՄԻՐԸ՝ անհասկանալի կամ խնդրահարույց հատվածների համար: Սցենարների մեծ մասում տեղ գտան ավելի շատ կանաչ, քան կարմիր նշումներ, ինչն ընդհանուր առմամբ դրական ընդունելության ցուցիչ էր: Այնուամենայնիվ, 4-րդ սցենարը, որը բացահայտորեն պատկերում էր բռնության տարբեր ձևեր, աչքի ընկավ կարմիր նշումների գերակշռմամբ՝ հուշելով, որ այն անհանգստություն և հուզական խռովմունք է պատճառել մասնակիցներին: Ստորև բերված են թաքառվածները մանրամասնում են խմբային քննարկումները՝ տրամադրելով բովանդակության խմբագրման գործընթացի համատեքստը: Ըմբռնումը հեշտացնելու նպատակով՝ սցենարները ներկայացված են «Առաջ» և «Հետո» վերնագրված սյունակներով, որոնք ցույց են տալիս սցենարների սկզբնական և խմբագրված տարբերակները:

Սցենար 1. Տեղեկացնել և ուղղորդել


ԱՌԱՋ	ՋԵՏՈ
<p>[Քաղաքի փողոցի կադր. անցուդարձ]:</p> <p>«Յուրաքանչյուր հասարակություն փոփոխությունների հնարավորություն ունի»:</p> <p>[Մի շարք արագ կադրեր, որոնք ցույց են տալիս տարբեր առօրյա տեսարաններ.</p> <p>- ամուսինը, կնոջ հետ միասին, ընթրիքի սեղանն է գցում.</p> <p>- կինն իր ղեկավարի աշխատասենյակում գործնական քննարկման մեջ է]:</p> <p>Ձայնավորում. «Գեներային բռնությունը կարող է ցանկացած ժամանակ խաթարել խաղաղ և անվտանգ կյանքը»:</p> <p>[Կադր. լարված, մտահոգ անցորդի հայացք]:</p> <p>Ձայնավորում. «Բայց դա կարող է այդպես չլինել»:</p> <p>[Կադրում հայտնված մի քանի կին ու տղամարդ խորը շունչ են քաշում պատրաստվելով միջամտելու]:</p> <p>«Մենք կարող ենք կանգնեցնել ցիկլը»:</p> <p>[Կադր. անցորդ, որը վստահորեն առաջ է քայլում]:</p> <p>«Մենք կարող ենք բարձրաձայնել...»</p> <p>[Կադր. անցորդին, որն անդրադառնում է իրավիճակին]:</p> <p>Ձայնավորում. «...և քայլ անել»:</p> <p>[Անցորդը շարունակում է միջամտել]:</p> <p>«Մենք կարող ենք աջակցել...»</p> <p>[Անցորդը ձեռք է մեկնում]:</p> <p>Ձայնավորում. «...և կարեկցանք ցուցաբերել»:</p>	<p>[Քաղաքի փողոցի կադր. անցուդարձ]:</p> <p>«Յուրաքանչյուր հասարակություն փոփոխությունների հնարավորություն ունի»:</p> <p>[Մի շարք արագ կադրեր, որոնք ցույց են տալիս տարբեր առօրյա տեսարաններ.</p> <p>- ամուսինը, կնոջ հետ միասին, ընթրիքի սեղանն է գցում,</p> <p>- կանայք և տղամարդիկ խորհրդակցությունների սենյակում քննարկման են]:</p> <p>Ձայնավորում. «Բռնությունը կարող է ցանկացած ժամանակ խաթարել խաղաղ և անվտանգ կյանքը»:</p> <p>[Կադր. հանգիստ հայացքով նայող երիտասարդ կին և ապա՝ տղամարդ]:</p> <p>Ձայնավորում, տղամարդ. «Մենք կարող ենք կանգնեցնել ցիկլը»:</p> <p>[Կադրում հայտնված կինն ու տղամարդը հերթով խոսում են]:</p> <p>[Կադր. կինը քայլում է դեպի տեսախցիկը]:</p> <p>Կին. «Մենք կարող ենք իրազեկել...»</p> <p>[Կադր. տղամարդը քայլում է դեպի տեսախցիկը]:</p> <p>Տղամարդ. «...և ուղղորդել»:</p> <p>[Տեսախցիկն աստիճանաբար մեծացնում է տեսարանի ընդգրկումը, և խճանկարում հայտնվում են մի խումբ տղամարդիկ ու կանայք: Մի մասը հեռախոսով է ինչ-որ բան փոխանցում, մյուս մասը թերթիկ է փոխանցում, երրորդը հաղորդագրություն է ուղարկում]:</p> <p>«Մենք կարող ենք աջակցել մեր ծանոթներին, ընկերներին ու</p>

<p>[Կտրված մի շարք կադրեր, որոնցում երևում է, թե ինչպես են անցորդները տարբեր իրավիճակներում միմյանց աջակցում]:</p> <p>Ձայնավորում. «Միասին մենք կարող ենք ստեղծել ապահով հասարակություն»:</p> <p>[Տեքստ` Էկրանին. «Դուք ունեք փոփոխություն կատարելու ուժ»]:</p> <p>Ձայնավորում. «Եղիր այն փոփոխությունը, որը ցանկանում ես տեսնել»:</p> <p>[Անցորդների/խմբի կադր, որոնք կանգնած են միասին, միավորված]:</p> <p>Ձայնավորում. «Միասին մենք կարող ենք վերջ տալ գենդերային բռնությանը»:</p> <p>[Վերջին կադր. աջակցության և տեղեկության ռեսուրսներ: Էկրանին հայտնվում է Կոալիցիայի կայքի հասցեն, որի առաջին էջում տեղադրվելու են ԿԱԿ, ՍԲՃԿ, ՓԻՆՔ թեժ գծերի հեռախոսահամարները]:</p> <p>[Մեղմ գործիքային երաժշտությունը մարում է]:</p>	<p>Ձայնավորում. «...և փոխանցել աջակցման կենտրոնների թեժ գծի համարները»:</p> <p>Ձայնավորում. «Դուք ունեք փոփոխություն կատարելու ուժ»</p> <p>[Տեքստ` Էկրանին. «Եղիր այն փոփոխությունը, որը ցանկանում ես տեսնել»]:</p> <p>[Անցորդների/խմբի կադր, որոնք կանգնած են միասին, միավորված]:</p> <p>Ձայնավորում. «Միասին մենք կարող ենք ստեղծել ապահով հասարակություն»:</p> <p>[Վերջին կադր. աջակցության և տեղեկության ռեսուրսներ: Էկրանին հայտնվում է Կոալիցիայի կայքի հասցեն, որի առաջին էջում տեղադրվելու են ԿԱԿ, ՍԲՃԿ, ՓԻՆՔ թեժ գծերի հեռախոսահամարները]:</p> <p>[Մեղմ գործիքային երաժշտությունը մարում է]:</p>
---	---

Երեք ՖԻՔ-ներով նախատիպավորելուց հետո՝ սցենարում զգալի փոփոխություններ արվեցին: Մասնակիցների կողմից խնդրահարույց համարված հատվածները նշված են կարմրով, որոնք ցույց են տալիս քննարկումներից ստացված արձագանքն ու մտահոգությունները: Այս բաժիններն այնուհետև վերանայվեցին և այժմ նշված են կապույտով՝ արտացոլելու փոփոխությունները՝ հիմնված ՖԻՔ-ներում մասնակիցների հայտնած ցանկությունների և տպավորությունների վրա:

Այժմ գանթ գործընթացին. քննարկումների մասնակիցները պետք է համաձայնեին կամ չհամաձայնեին մի քանի պնդումների, ինչը կարտացոլեր քննվող սցենարի վերաբերյալ նրանց տեսակետները: Գրեթե կեսը համաձայնեց, որ սցենարը տալիս է նոր տեղեկություն, օգտագործում է պարզ լեզու և դյուրըմբռնելի է: Հուզական տեսանկյունից՝ կեսից ավելին այն համարեց գրավիչ և նշեց, որ կարդալիս իրեն հանգիստ է զգացել: Բացի այդ, ավելի քան երկու երրորդը շեշտեց, որ հավանաբար կտարածեր այն: Եվ վերջապես, մեծամասնությունը համարեց, որ բովանդակությունը հարգալիր է:

Գունային կողավորումն օգտագործվել է բովանդակության խնդրահարույց մասերը բացահայտելու համար: Յուրաքանչյուր տող առանձնացվել և հաշվվել է այն բանի հիման վրա, թե մասնակիցները քանի անգամ են դա կարմիր կամ կանաչ ներկել: Այնուհետև, ընդհանուր պատկերը ստանալու համար վերլուծվել և գումարվել է կանաչ ու կարմիր նշումների քանակը: Կանաչ նշումների ընդհանուր թիվը համեմատվել է կարմիր նշումների ընդհանուր թվի հետ: Եթե որևէ հատվածում կարմիր նշումները գերազանցել են կանաչ նշումները, դա մատնացույց է արել փոփոխությունների անհրաժեշտությունը:



Երևանում մասնակիցները հավանություն տվեցին սցենարի ընդհանուր մտադրությանը, մասնավորապես՝ գենդերային բռնությունը հասցեագրելու և խմբային գործողությունները քաջալերելու շեշտադրմանը: Նրանք գնահատեցին սցենարի վերջում գործնական աջակցության ռեսուրսների, ինչպես, օրինակ, թեժ գծերի ներառումը՝ գիտակցելով գենդերային բռնություն վերապրածներին և այլ ռիսկային խմբերին, ինչպիսիք են կանայք ու աղջիկները, իրապես օգնելու կարևորությունը: Առօրյա իրավիճակներում միջամտության և աջակցության խթանման գաղափարը դիտվեց որպես քննվող սցենարով առաջարկվող ուժեղ և անհրաժեշտ ուղերձ: Մասնակիցները նաև նշեցին, որ, չնայած մարտահրավերներին, սցենարն ունի դիտողի վրա ազդելու ներուժ, եթե վերջնական արտադրանքում զուգորդվի տպավորիչ տեսողական տարրերով և պատշաճ կատարմամբ:

Մյուս կողմից, սցենարն արժանացավ որոշ քննադատության: Մասնակիցներից շատերը համարեցին, որ բովանդակությունն անչափ ծանոթ է և չի պարունակում նոր կամ անսպասելի տեղեկություն: Պատումը բնորոշվեց որպես կտրուկ անցումներ ունեցող ու չկապակցված, ինչը խանգարում է ըմբռնմանն ու մտապատկերմանը: Լեզուն և կառուցվածքը համարվեցին

անհասկանալի՝ դժվարացնելով մասնակիցների՝ բովանդակության մեջ լիովին խորասուզվելը: Բացի այդ, սցենարը քննադատվեց զգայունության և իրատեսության պակասի համար, իսկ մասնակիցները համոզմունք հայտնեցին, որ բռնության ու միջամտության ավելի հավաստի պատկերումն ուղերձն ավելի ազդեցիկ կդարձներ: Մասնակիցներն ընդգծեցին նաև ավելի մեծ գենդերային ներառականության և տղամարդկանց՝ ընդունելի վարքագծի վերաբերյալ կրթելու ավելի թիրախային մոտեցման անհրաժեշտությունը: Ընդհանուր առմամբ, համարվեց, որ սցենարը զգալի վերանայման կարիք ունի՝ բարելավելու հստակությունը, հուզական ազդեցությունը և հանդիսատեսին ներգրավելու արդյունավետությունը:

Գյումրիում մասնակիցները երախտագիտություն հայտնեցին քարոզարշավի սցենարի որոշ կողմերի համար: Նրանք կարևորեցին «մենք» բառի հաճախակի օգտագործումը՝ ընդգծելով, թե որքան կարևոր է խնդիրների լուծման գործում խմբային պատասխանատվության ու միասնության զգացումը խթանելը: Բացի այդ, դրական արձագանքներ եղան տղամարդկանց ու կանանց համագործակցության տեսարանների վերաբերյալ, ինչպիսիք են, օրինակ, միասին ընթրիք պատրաստելը կամ աշխատանքային քննարկմանը կնոջ մասնակցելը: Այս տեսարանները համարվեցին ներառական և գենդերային հավասարությունն արտացոլող: Ընդհանուր առմամբ, մասնակիցներից ոմանք նշեցին, որ իրենց դուր է գալիս սցենարը՝ շեշտելով, որ այն ունի տարրեր, որոնք գրավիչ և վերաբերելի են իրենց:

Այնուամենայնիվ, որոշ մասնակիցներ ներկայացրեցին կառուցողական քննադատություն՝ մատնացույց անելով բարելավման ենթակա կողմերը: Նշվեց, որ սցենարն այնքան էլ լիարժեք դյուրըմբռնելի չէ, և շեշտվեց «բռնություն» բառն ավելի հստակ ընդգծելու անհրաժեշտությունը, որպեսզի ուշադրություն հրավիրվի առանցքային խնդրի վրա: Բացի այդ, կարծիք հնչեց, որ բռնությունն ակնարկող տեսարանների ընդգրկումը (առանց չափից դուրս բացահայտ պատկերելու) կարող է օգնել ավելի արդյունավետ փոխանցելու քարոզարշավի ուղերձը, քանի որ մարդիկ հաճախ ավելի շատ կենտրոնանում են տեսողական տարրերի, քան պատմողի խոսքի վրա: Մտահոգություններ հնչեցին նաև «բայլ արա» արտահայտության վերաբերյալ, որը ոմանք կապեցին Հայաստանում քաղաքական քարոզարշավների հետ՝ խորհուրդ տալով հանել՝ հնարավոր թյուրըմբռնումներից խուսափելու համար: Հարկ եղավ պարզաբանելու, թե ինչ է նշանակում «գենդեր» եզրը, քանի որ լսարանի տարբեր անդամներ դա կարող էին տարբեր կերպ ընկալել, ինչը վերհանեց ավելի ճշգրիտ լեզվի անհրաժեշտությունը՝ ապահովելու ուղերձի համընդհանուր ըմբռնելիությունը:

Վանաձորում մասնակիցների մեծ մասը բարձր գնահատեց սցենարի պարզ ու հստակ լեզուն: Նաև համարեց, որ սցենարը հարգալիր, զգայուն ու հանգստաբեր է: Գրեթե բոլոր մասնակիցները պատրաստակամություն հայտնեցին տարածելու

այս սցենարով նկարահանված տեսանյութը: Բացի այդ, մասնակիցները գնահատեցին կոլեկտիվ կամ խմբային մտածողության գաղափարը, որը կարող է օգնել լուծելու հասարակական խնդիրները: Նրանք շեշտեցին, որ եթե անձամբ դու չես առնչվում կոնկրետ խնդրի, չի նշանակում, որ այդ խնդիրը գոյություն չունի կամ մեկ ուրիշի վրա չի ազդում: Հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է ձգտի դրականորեն փոխակերպելու հասարակությունը:

Մյուս կողմից, որոշ մասնակիցներ դժգոհեցին, որ սցենարը չափազանց երկար է, մինչդեռ կարող է լինել ավելի հակիրճ ու դիպուկ: Սցենարի որոշ մասեր մասնակիցներին անհասկանալի կամ դժվար ըմբռնելի թվացին, հատկապես այն մասը, որտեղ «կինն իր ղեկավարի աշխատասենյակում գործնական քննարկման մեջ է», ինչը թե՛ քննադատի առարկա դարձավ: Ոմանք նշեցին, որ պետք է հստակեցնել, թե կոնկրետ ինչ գործնական/բիզնես քննարկումներ են դրանք: Մյուսները դժգոհեցին՝ նշելով, որ սցենարում չպետք է լինի հիերարխիա, և որ թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք պետք է հավասար դիրքերում լինեն, եթե սցենարը նպատակ ունի ցույց տալու գենդերային անհավասարությունը կամ գենդերային բռնությունը: Սրան հակառակ՝ ոմանք համաձայն էին հիերարխիային, քանի որ հենց այս պայմաններում են կանայք հաճախակի ենթարկվում տղամարդկանց բռնությանը:

Միևնույն տրամաբանությամբ՝ հակասական տրամադրություններ առաջացրեց այն հատվածը, որտեղ «կինը հաղորդագրություն է ստանում նախկին զուգընկերոջից»: Նախ, մասնակիցները նշեցին, որ կարևոր է փոխանցել կնոջ ստացած հաղորդագրության ճշգրիտ բովանդակությունը: Ոմանք շեշտեցին, որ սցենարի այս հատվածը նպատակ ունի ցույց տալու, որ կանայք հաճախ ենթարկվում են իրենց նախկին զուգընկերների ոտնձգություններին, շանտաժին կամ բռնությանը: Մյուսները պնդեցին, որ այս տեսարանն այնքան էլ իմաստ չունի, քանի որ կնոջ ստացած հաղորդագրությունը կարող է, ըստ էության, չպարունակել բռնության տարրեր:

Եզրակացություն

Բոլոր երեք քաղաքների մասնակիցներն ունեցան այն զգացողությունը, որ սցենարը չափազանց ծանոթ է և զուրկ նոր կամ անսպասելի տարրերից: Նաև նշեցին, որ սցենարի որոշ հատվածներին դժվար է հետևելը, ուստի առաջարկեցին կրճատել: Այնուամենայնիվ, մեծապես արժևորվեց կոլեկտիվ գործողությունների, միասնության և գործնական աջակցության ռեսուրսների (ինչպիսիք են թե՛ զժերը) ներառումը, որոնք համարվեցին կարևոր՝ վերապրածներին շոշափելի օգնություն ցուցաբերելու առումով: Բարձր գնահատվեց նաև առօրյա իրավիճակներում տղամարդկանց ու կանանց համագործակցության պատկերումը՝ որպես գենդերային հավասարությունը խթանելու դրական մոտեցման արտացոլում: Չնայած սրան՝ մասնակիցները մտահոգություն հայտնեցին սցենարի ընդհանուր հստակության և սահունության վերաբերյալ՝ որպես հանդիսատեսին

ներգրավելու խոչընդոտներ նշելով չկապակցված պատումը, մշուշոտ լեզուն և անհստակ ուղերձները: Փոխհամաձայնություն կար բռնության ավելի հստակ, սակայն զգայուն պատկերման անհրաժեշտության շուրջ՝ մեծացնելու ուղերձի իրատեսությունն ու ազդեցությունը:

Չնայած այս ընդհանուր տեսակետներին՝ քաղաքների միջև ի հայտ եկան նաև առանցքային տարբերություններ: Երևանի մասնակիցները սցենարը համարեցին ծանոթ և թարմ բովանդակությունից զուրկ՝ ընդգծելով ավելի լայն գեղերային ներառականության անհրաժեշտությունը՝ մասնավորապես ընդունելի վարքագծի վերաբերյալ տղամարդկանց կրթելու հարցում: Գյումրիում մասնակիցները գնահատեցին «մենք» բառի օգտագործումը միասնության զգացում առաջացնելու տեսանկյունից, բայց համարեցին, որ այնպիսի եզրերը, ինչպես, օրինակ, «բռնությունը», պետք է ավելի նկատելիորեն ընդգծվեն: Նաև մտահոգություն հայտնեցին քաղաքական քարոզարշավների հետ համընկնող լեզվի վերաբերյալ, ինչը կարող է առաջացնել շփոթություն կամ չկանխամտածված ասոցիացիաներ: Վանաձորում դրականորեն ընդունվեցին հարգալից տոնն ու կոլեկտիվ մտածողության գաղափարը, սակայն հակընդդեմ կարծիքներ եղան աշխատավայրում հիերարխիայի, ինչպես նաև նախկին զուգընկերոջից հաղորդագրություն ստացող կնոջ տեսարանի պատկերման վերաբերյալ, քանի որ ոմանք կասկածի տակ դրեցին դրա հստակությունն ու արդիականությունը:

Այս արձագանքների շնորհիվ սցենարը մանրամասն վերանայվեց. հանվեց «գեղեր» եզրը՝ փոխարենը կենտրոնանալով բացառապես բռնության վրա և խթանելով շատերին գործողության մղող կոչը՝ հնչած երկու սեռերի ձայներով: Չկապակցված հատվածները հղկվեցին ավելի մանրամասն տեսողական պատկերներով ու գործողությունների կոնկրետ տեսարաններով, ինչպես նաև ուղերձներով, որոնք խրախուսում են թե՛ գծի վերաբերյալ տեղեկության տրամադրումը վերապրածներին: Վերջապես, բռնությանը վերջ տալու անհրաժեշտությունը պարզապես շեշտելու փոխարեն՝ սցենարն ավարտվեց հանդիսատեսին ուղղված զորեղացնող կոչով՝ ակտիվորեն մասնակցել ավելի ապահով հասարակության կառուցմանը:

Սցենար 2. Աղ ունե՞ս

ԱՌԱՋ	ՉԵՏՈ
<p>[Հանդարտ թաղամասի բացվող կադր՝ իրար մոտ գտնվող տներ]:</p> <p>«Յուրաքանչյուր թաղամասում կան պահեր, որոնք պահանջում են մեր ուշադրությունը»:</p> <p>[Կադրում տեսնում ենք մի տղամարդու իր խոհանոցում: Կանգ է առնում: Հարևանի տնից ձայներ են լսվում]:</p> <p>«Երբ ինչ-որ բան լսես, կգործե՞ս»:</p> <p>[Տղամարդը տատանվում է, հետո որոշում է միջամտել: Գնում է դեպի կողքի դուռը]:</p> <p>[Թակում է հարևանի դուռը՝ մտահոգ, բայց վճռական]:</p> <p>Ձայնավորում. «Հասարակ արարքը կարող է փոխել ամեն ինչ»:</p> <p>[Հարևանը բացում է դուռը և զարմացած նայում]:</p> <p>Տղամարդ. «Աղ ունե՞ս... »:</p> <p>Ձայնավորում. «Միջամտությունը սկսվում է հարցով».</p> <p>[անձայն Էկրանին նորից հայտնվում է հարցը]</p> <p>«Աղ ունե՞ս»:</p> <p>[Վերջին կադր. աջակցության և տեղեկության ռեսուրսներ: Էկրանին հայտնվում է Կոալիցիայի կայքի հասցեն, որի առաջին էջում տեղադրվելու են ԿԱԿ, ՍԲՃԿ, ՓԻՆԶ թեժ գծերի հեռախոսահամարները]:</p> <p>[Մեղմ գործիքային երաժշտությունը մարում է]:</p>	<p>[Հանդարտ թաղամասի բացվող կադր՝ իրար մոտ գտնվող տներ]:</p> <p>«Ամեն թաղամասում կան պահեր, որոնք պահանջում են մեր ուշադրությունը»:</p> <p>[Կադրում տեսնում ենք մի տղամարդու իր խոհանոցում: Կանգ է առնում: Հարևանի տնից բռնության ձայներ են լսվում]:</p> <p>«Երբ ինչ-որ բան լսես, կգործե՞ս»:</p> <p>[Տղամարդը տատանվում է, հետո որոշում է միջամտել: Գնում է դեպի կողքի դուռը]:</p> <p>[Թակում է հարևանի դուռը՝ մտահոգ, բայց վճռական]:</p> <p>Ձայնավորում. «Հասարակ արարքը կարող է փոխել ամեն ինչ»:</p> <p>[Հարևանը բացում է դուռը և զարմացած նայում]:</p> <p>Տղամարդ. «Աղ ունե՞ս... »:</p> <p>Ձայնավորում. «Միջամտությունը սկսվում է հարցով».</p> <p>[Վերջին կադր. աջակցության և տեղեկության ռեսուրսներ: Էկրանին հայտնվում է Կոալիցիայի կայքի հասցեն, որի առաջին էջում տեղադրվելու են ԿԱԿ, ՍԲՃԿ, ՓԻՆԶ թեժ գծերի հեռախոսահամարները]:</p> <p>[Մեղմ գործիքային երաժշտությունը մարում է]:</p>

Հնդկաստանում մեկնարկած Bell Bajao («Հնչեցրո՛ւ՛ զանգը») քարոզարշավը սոցիալական իրազեկման բեկումնային նախաձեռնություն էր՝ ուղղված ընտանեկան բռնության դեմ պայքարին և գենդերային հավասարության խթանմանը: Քարոզարշավը տղամարդկանց ու տղաներին խրախուսում էր

պարզ ու առօրեական միջամտություններով ակտիվ դեր ստանձնել կանանց նկատմամբ բռնությունը կանգնեցնելու գործում: Bell Bajao-ի հիմնական ուղերձն այն է, որ բոլորը, հատկապես տղամարդիկ, կարող են վճռորոշ դեր խաղալ ընտանեկան բռնությանը մարտահրավեր նետելու և այն դադարեցնելու գործում, եթե չլռեն այդպիսի արարքների ականատես լինելիս: Գաղափարը պարզ է, բայց և՛ հզոր. եթե որևէ մեկի տնից բռնության ձայն եք լսում կամ բռնություն եք կասկածում, միջամտե՛ք՝ հնչեցնելով դռան զանգը կամ թակելով դուռը: Այսպիսի ոչ առճակատային գործողությունն ընդհատում է բռնությունը և ցույց տալիս բռնարարին, որ նրա արարքներին հետևում են: Այն նաև դիրշորորում հայտնելու այլաբանություն է և ապացուցել է, որ շատ արդյունավետ է համայնքի ներգրավվածությունը մոբիլիզացնելու հարցում:

Ոգեշնչվելով այս մոտեցմամբ՝ Կոալիցիան որոշեց ներառել նմանատիպ սցենար, որպեսզի ներգրավի և խրախուսի տղամարդկանց՝ խախտել ընտանեկան բռնության շուրջ լռությունը: Որոշումը հիմնավորվում էր նախորդ հետազոտությամբ, որը ցույց էր տալիս, որ տղամարդիկ հաճախ ցանկանում են միջամտել, բայց չունեն դա ոչ բռնի ձևով անելու հմտություններ կամ պատկերացումներ: Տրամադրելով պարզ ու գործուն մարտավարություն՝ հարմարեցված սցենարը նպատակ ունի հզորացնել տղամարդկանց, որպեսզի ընտանեկան բռնության դեմ պայքարում գործեն իբրև դաշնակիցներ:

Մասնակիցների արձագանքներն ընդգծեցին, որ սցենարն արդյունավետ էր ուղիղ ու պարզ լեզու օգտագործելու առումով, ինչն այն շատերի համար դարձնում էր դյուրըմբռնելի: Մասնակիցները գնահատեցին սցենարի հստակությունը, ինչը վկայում է, որ ուղերձը մատչելի էր և հստակ: Հուզական տեսանկյունից՝ սցենարը մասնակիցներին թույլ տվեց զգալ հանգիստ և հարգված, իսկ շատերը համարեցին, որ այն զգայուն է իրենց փորձառության նկատմամբ, ինչը հուշում է, որ բովանդակությունը մշակվել էր մտածված կերպով՝ հուզական մակարդակում հանդիսատեսի հետ կապ ստեղծելու համար:

Այնուամենայնիվ, որոշ հատվածներ ստացան հակասական արձագանքներ: Թեև սցենարն ընկալվեց որպես հարգալիր և զգայուն, այն առանձնապես չտվեց Նոր տեղեկություն, ինչը վկայեց Նորության բացակայության մասին: «Արդյո՞ք սցենարն ուներ «Ահա՛-գործոն»» հարցին տրված պատասխանները բազմազան էին, ինչը հուշում է, որ, թեև բովանդակությունը տեղեկատվական էր, բայց կարող էր բոլոր մասնակիցների համար առանձնապես ազդեցիկ կամ հիշարժան չլինել: Նմանապես, կարծիքները բաժանվեցին սցենարի արդիականության և դրա ուղերձի համաձայն գործելու ցանկությունն առաջ բերելու հարցում, ինչը մատնացույց արեց, որ սցենարը կարող էր ավելի թիրախային և դրդող լինել:

Երևանում մասնակիցները բարձր գնահատեցին սցենարի նուրբ և վերաբերելի մոտեցումը՝ գեներային բռնության դեմ պարզ գործողություններով պայքարելու հարցում: Գաղափարը, որ մարդը միջամտում է աղիպես հասարակքան

խնդրելով, համարվեց արդյունավետ՝ ցույց տալու, թե փոքր գործողություններն ինչպես կարող են կանխել ավելի մեծ խնդիրներ: Մասնակիցները հայտնեցին, որ այս մոտեցումը կարող է արձագանք գտնել այն մարդկանց մեջ, ովքեր գուցե չցանկանան ուղղակիորեն միջամտել բռնի իրավիճակներին: Վերջին կադրում աջակցման թեժ գծերի ներառումն արժանացավ գովասանքի՝ իբրև կարևոր տարր՝ հանդիսատեսին սցենարից դուրս գործուն քայլերի մղելու համար:

Մյուս կողմից, պատումը շատերին անավարտ թվաց՝ թողնելով մտորելու, թե ինչ տեղի կունենա տղամարդու կողմից դուռը թակելուց հետո: Հստակ հանգուցալուծման կամ շարունակության բացակայությունը համարվեց միջամտության ազդեցությունը լիովին փոխանցելու բաց թողնված հնարավորություն: Բացի այդ, անհստակ և անհարթ թարգմանված լինելու պատճառով քննադատվեց սցենարի լեզուն՝ որպես ընդհանուր ուղերձից շեղող հանգամանք: Մասնակիցները նաև մտահոգվեցին սցենարի իրատեսությամբ՝ կարծիք հայտնելով, որ այն կարող է բարելավվել հույզերի ու գործողությունների ավելի մանրամասն պատկերմամբ, ինչպես օրինակ՝ տղամարդու վարանումն ավելի վառ ներկայացնելով, կամ նրա միջամտության հետևանքները ցույց տալով: Նրանց թվաց, որ սցենարը կարիք ունի ավելի բացահայտորեն ուղղորդելու, թե ինչ անել նման իրավիճակներում, ներառյալ՝ թե որոնք կարող են լինել ներգրավված անձանց հնարավոր արձագանքները, որպեսզի ուղերձն ավելի ազդեցիկ և իրատեսական դառնա:

Գյումրիում մասնակիցները սցենարը համարեցին հստակ, հակիրճ և ուղիղ: Բարձր գնահատեցին պատումի նրբությունը, հատկապես այն, թե ինչպես է սցենարն ավարտվում «աղ ունե՞ս» անուղղակի միջամտությամբ՝ որպես բռնության իրավիճակում միջամտելու տարբերակ: Այս մոտեցումը համարվեց խորհրդանշական ու խելացի, որը լավ արձագանք գտավ մասնակիցների շրջանում: Սցենարը նաև գովեստի արժանացավ այն բանի համար, որ հանդիսատեսին քաջալերում է քայլեր ձեռնարկելու և մանր դետալներին ուշադրություն դարձնելու. մոտեցում, որն ամրապնդվում է «Հասարակ արարքը կարող է փոխել ամեն ինչ» արտահայտությամբ: Այս ուղերձն ազդեցիկ էր և ընդգծում էր համայնքում զգոն ու նախաձեռնող լինելու կարևորությունը:

Չնայած դրական ընդունելությանը՝ որոշ մասնակիցներ ցանկություն հայտնեցին տեսնելու ավելի սպառիչ ավարտ: Նրանց զգացողությունն այն էր, որ սցենարը չափազանց շատ բան է թողնում հանդիսատեսի երևակայությանը, բանի որ ավարտվում է հարցով՝ առանց ցուցադրելու, թե ինչ է լինում հետո: Այս անձանց տեսակետից՝ ավելի հստակ հանգուցալուծում տալը կհաղորդեր ավարտունության զգացում, և ուղերձը կդարձներ ավելի հզոր:

Վանաձորում մասնակիցները նշեցին, որ սցենարի բառերն ու նախադասություններն ուղիղ են ու դյուրըմբռնելի: Գրեթե բոլոր մասնակիցները համակարծիք էին խնդրահարույց իրավիճակները կանխելու կամ նվազեցնելու

համար հասարակ քայլեր անելու գաղափարին: Շատերը պնդում էին, որ հասարակ գործողությունները կարող են փոխել կամ գոնե դրականորեն ազդել իրավիճակի վրա: Մասնակիցները նաև նշեցին, որ եղել են պահեր, երբ չեն իմացել՝ ինչպես ճիշտ վարվել կամ միջամտել նման իրավիճակներում: «Աղ ունե՞ս» արտահայտությունը կարող է հատկապես կիրառելի լինել այն մարդկանց համար, ովքեր չգիտեն՝ ինչպես վարվել նման իրավիճակներում: Սա նաև վկայում է, որ հայ հասարակությունը հաճախ հակված է լռելու և բռնությանը չարձագանքելու:

Մյուս կողմից, շատերն իրենց անհամաձայնությունն ու որոշակի դժգոհությունն արտահայտեցին երկիմաստ ավարտի հարցում: Նրանք կնախընտրեին կոնկրետ արդյունք, ոչ թե հարցերով լի ավարտ: Մասնակիցների մեծամասնությունը կարծիք հայտնեց, որ սցենարը կշահեր ավելի թիրախային ու որոշակի լինելուց: Ու չնայած սրան՝ շատերը պատրաստակամություն հայտնեցին տարածել այս սցենարով նկարահանվելիք ապագա տեսահոլովակը:

Եզրակացություն

Բոլոր երեք քաղաքների մասնակիցները բարձր գնահատեցին սցենարում պարզ, ամենօրյա գործողությունների կիրառումը, ինչպես օրինակ՝ աղ խնդրելը, որպես բռնության իրավիճակներում միջամտելու այլաբանություն: Այս նուրբ և անուղղակի մոտեցումը համարվեց արդյունավետ՝ ցույց տալու, թե ինչպես հասարակ գործողությունները կարող են նշանակալի ազդեցություն ունենալ՝ արձագանք գտնելով մասնավորապես նրանց (հատկապես՝ տղամարդկանց) շրջանում, ովքեր կարող են վարանել բռնության հետ ուղղակիորեն առերեսվելու հարցում: «Հասարակ արարքը կարող է փոխել ամեն ինչ» ուղերձը դրական ընդունվեց բոլոր բնակավայրերում՝ ընդգծելով զգոնության և համայնքի ներգրավվածության կարևորությունը: Սցենարի վերջում աջակցության թեժ գծերի ներառումը նույնպես միահամուռ գովասանքի արժանացավ՝ որպես հանդիսատեսին՝ պատումից դուրս գործուն քայլեր առաջարկելու կարևոր տարր:

Այնուամենայնիվ, քաղաքների միջև ի հայտ եկան տարբերություններ՝ կապված սցենարի ավարտի հետ: Երևանում մասնակիցներին թվաց, որ պատմությունն անավարտ է և չունի հստակ հանգուցալուծում, ինչը նրանց թողնում է միջամտության արդյունքի հարցում անորոշության մեջ: Նրանք առաջարկեցին ներառել տղամարդու վարանումը և ներգրավվածների հնարավոր արձագանքները ցուցադրող ավելի վառ պատկերներ՝ բարձրացնելու իրատեսությունն ու ազդեցությունը: Գյումրիում մասնակիցները գնահատեցին սցենարի հստակությունն ու հակիրճությունը, բայց նաև ցանկացան ավելի համոզիչ ավարտ տեսնել՝ համարելով, որ բաց ավարտ ունենալու մոտեցումը չափից շատ բան է թողնում մեկնաբանությանը: Վանաձորում, մասնակիցները, թեպետ համաձայն էին բռնությունը կանխելուն ուղղված հասարակ քայլերի

գաղափարին, դժգոհություն հայտնեցին երկիմաստ ավարտից և նախընտրեցին ավելի կոնկրետ արդյունք, որը կհաղորդեր ավարտունության ավելի ուժեղ զգացում: Չնայած այս տարբերություններին՝ բոլոր քաղաքների մասնակիցները պատրաստ էին տարածել այս սցենարով ստեղծված տեսանյութը, ինչը մատնանշում է գաղափարի լայն աջակցությունը, բայց և ընդգծում որոշ հղկումների անհրաժեշտությունը:

Թեև սցենարը մեծ փոփոխությունների չենթարկվեց, մասնակիցների մտահոգությունները հասցեագրելու նպատակով արվեցին կարևոր ճշգրտումներ: Ակնհայտ էր, որ նրանք բավարարված չէին չհանգուցալուծված ավարտով, քանի որ պարզապես դուռը թակելն ու թվացյալ կապ չունեցող հարցեր տալը նրանց ստիպում էր մտորել, թե ինչ կլինի հետո: Կոալիցիայի թիմը գտավ լուծում, որը կպահպաներ բռնությունն ընդհատող ոչ առճակատային գործողության գաղափարը: Ուստի «աղ ունե՞ս» առկախված հարցից հետո ցուցադրվող պատկերն այժմ հուշում է, որ միջամտությունը սկսվում է հարցից՝ դիտողին թողնելով մտորելու: Այս շտկումը նպատակ ունի ապահովելու այդքան անհրաժեշտ ավարտունությունը՝ միաժամանակ պահպանելով սկզբնական ուղերձի նրբությունն ու նպատակը:

Սցենար 3. Տունը դարձնենք անտառից անվտանգ

ԱՌԱՋ	ՀԵՏՈ
<p>[Տեսարան. ոլորապտույտ արահետ՝ փարթամ անտառի միջով:]</p> <p>Տեսախցիկը հետևում է անտառում քայլող կնոջը, նա քայլում է ծառերի միջով և ունի անհոգ ու խաղաղ տեսք:]</p> <p>Ձայնավորում. «Վերջին անգամ ե՞րբ եք լսել գայլի կամ արջի հարձակման մասին»:</p> <p>[Տեսարան. անցում անտառից քաղաք: Կադրում հայտնվում է բազմաբնակարան շենք, տեսախցիկը հեռանում է՝ ավելի ընդգրկուն դարձնելով տեսարանը, որտեղ երեկոյան քաղաքում շենքի մի շարք բնակարաններում լույսերը մարում են: Ապա ողջ կադրը սևանում է:]</p> <p>Ձայնավորում. «Տասնհինգը հարյուր կանանցից իրենց կյանքի ընթացքում ընտանիքում բռնության են ենթարկվել¹²»:</p> <p>[Սև կադրում հնչում են անտառի ձայները, թռչունների ծվլոց և այլն, ապա Էկրանը բացվում է ընտանիքի տեսարանով, որտեղ մարդիկ հանգիստ ու համերաշխ շփվում են, կամ նմանատիպ տեսարան է:]</p> <p>Ձայնավորում. «Տունը դարձնենք անտառից անվտանգ»:</p> <p>Ձայնավորում. «Օգնեք ձեր մտերիմներին, փոխանցեք անվտանգ աջակցության հեռախոսահամարները»:</p> <p>[Էկրանին հայտնվում է կոալիցիայի կայքէջը և/կամ QR կոդը]:</p>	<p>[Տեսարան. ոլորապտույտ արահետ՝ փարթամ անտառի միջով:]</p> <p>Տեսախցիկը հետևում է անտառում քայլող կնոջը, նա քայլում է ծառերի միջով և ունի անհոգ ու խաղաղ տեսք:]</p> <p>Ձայնավորում.«Վերջին անգամ ե՞րբ եք լսել գայլի կամ արջի հարձակման մասին»:</p> <p>[Տեսարան. անցում անտառից քաղաք: Կադրում հայտնվում է բազմաբնակարան շենք, տեսախցիկը հեռանում է՝ ավելի ընդգրկուն դարձնելով տեսարանը, որտեղ երեկոյան քաղաքում շենքի մի շարք բնակարաններում լույսերը մարում են: Հնչում են բռնության ձայներ: Ապա ողջ կադրը սևանում է:]</p> <p>Ձայնավորում. «Հայաստանում յուրաքանչյուր հարյուր կանանցից տասնհինգն իրենց կյանքի ընթացքում ամուսնու կողմից ֆիզիկական բռնության են ենթարկվել»: [Էկրանին ինֆոգրաֆիկայով տրվում է պատկերը՝ հարյուր կանանց էմոջիներով, որոնցից տասնհինգն անհետանում են:]</p> <p>[Սև կադրում հնչում են անտառի ձայները, թռչունների ծվլոց և այլն, ապա Էկրանը բացվում է ընտանիքի տեսարանով, որտեղ մարդիկ հանգիստ ու համերաշխ շփվում են, կամ նմանատիպ տեսարան է:]</p> <p>Ձայնավորում. «Տունը դարձնենք անտառից անվտանգ»:</p> <p>Ձայնավորում. «Օգնեք ձեր մտերիմներին, փոխանցեք գաղտնի և անվտանգ աջակցության հեռախոսահամարները»:</p> <p>[Էկրանին հայտնվում է կոալիցիայի կայքէջը և/կամ QR կոդը]:</p>

12 Համաձայն հետազոտության արդյունքների՝ Հայաստանում 15-59 տարեկան կանանց 14.8%-ը զուգընկերոջ կողմից երբևէ ենթարկվել է ֆիզիկական բռնության: ՀՀ ԱԿԾ 2021թ.:

Ֆեմինիստական գրվածքները հաճախ քննում են տներն իբրև տարածքներ, որոնցում կանանց ինքնավարությունը վտանգված է, դրանք հակադրելով վայրի բնությանը, որը խորհրդանշում է ազատությունը, ազատագրումը և անվտանգությունը: Կլարիսա Պինկոլա Էստեսի «Գայլերի հետ վազող կանայք» ստեղծագործությունը ցայտուն օգտագործում է կենդանիների ու վայրի բնության պատկերները՝ արտահայտելու այս հակադրությունը: Շերոն Օլրսի և Սիլվիա Պլաթի պես բանաստեղծները կերտում են բնական միջավայրի և ընտանեկան կյանքի միջև հզոր զուգահրումներ՝ ընդգծելով թակարդի, բռնության ու անվտանգության փնտրտուքի թեմաները: Գրետա Գաարդի և Քերոլին Մերչանթի նման գիտնականներն ուսումնասիրում են հայրիշխանական վերահսկողությունից հեռու՝ բնության տարածքներն իբրև ամոքման ու ազատության վայրեր վերանվաճելու գաղափարը: Այս համեմատությունները, հատկապես նրանք, որոնք վերաբերում են գենդերային բռնությանը, ներթափանցել են հանրամատչելի արվեստի և ֆեմինիստական քարոզարշավների մեջ՝ ցույց տալու այն հեգնանքը, թե բազմաթիվ կանանց համար իրականում որտեղ է անվտանգ: Կոալիցիայի մշակած սցենարը ելնում է այս նույն արմատներից՝ իր ուղերձը փոխանցելու հարցում ոգեշնչվելով ֆեմինիստական գրականությունից ու արվեստի ձևերից:

Մասնակիցները սցենարը գնահատեցին ֆունկցիոնալ և հուզական առանցքային չափորոշիչներով, և մեծ մասը նշեց, որ լեզուն, բառերն ու նախադասությունները պարզ են: Մասնակիցների մեծամասնությունն ընդգծեց, որ սցենարը հստակ է և դյուրըմբռնելի: Ընդհանուր առմամբ, սցենարն արժանացավ մասնակիցների հավանությանը: Մասնակիցների մեծ մասը համարեց, որ հուզականության տեսանկյունից սցենարը հարգալիիր է, զգայուն և հանգստաբեր: Շատերը հայտնեցին, որ կտարածեին այս սցենարով նկարահանված տեսանյութը: Բացի այդ, մասնակիցների մեծ մասը նշեց, որ արդիականության և կիրառելիության տեսանկյունից սցենարը վերաբերելի է թվում, և որ այն կարդալուց հետո իրեն կարող է պատկերացնել նույն կերպ վարվելիս: Սա մասամբ կարելի է վերագրել այն փաստին, որ մասնակիցների մեծ մասը երիտասարդ կանայք էին, որոնք դեռևս միություն չէին կազմել, ինչը սցենարը դարձնում էր զուգընկերոջ բռնությանն (ԶԲ) առնչվող նրանց անձնական փորձառությանն ուղիղ կերպով պակաս վերաբերելի: Բացի այդ, երբ շոշափվում են այնպիսի զգայուն թեմաներ, ինչպիսին է, օրինակ, ԳԲ-ն, ուղիղ հարցերը, որոնք կարող են բացահայտել ինչ-որ մեկի՝ վերապրած կամ նույնիսկ վկա լինելը, հաճախ չեն տալիս անկողմնակալ կամ վստահելի արդյունքներ, քանի որ մասնակիցները կարող են անհարմար զգալ նման անձնական տեղեկությունը բարձրաձայնելուց: Բացի այդ, գրաֆիկի «Ահա՛-գործոնը» ցույց է տալիս, որ շատ մասնակիցների կարծիքով բովանդակությունը ո՛չ ազդեցիկ է, ո՛չ էլ օգտակար:

Երևանում մասնակիցներն արժևորեցին սցենարի հզոր պատկերները և անտառի անվտանգության ու տան, որտեղ տեղի է ունենում ընտանեկան բռնությունը, վտանգավորության յուրահատուկ համեմատությունը: Վայրի կենդանիների մեջ՝ բռնարար զուգընկերոջ հետ լինելուց ավելի ապահով զգալու այլաբանությունն արձագանք գտավ բազմաթիվ մասնակիցների մեջ, որոնք համարեցին, որ դա ուշագրավ և մտածելու տեղիք տվող գաղափար է: Վիճակագրությունը, ըստ որի՝ «100 կանանցից 15-ն ընտանեկան բռնության է ենթարկվում», շեշտվեց որպես ազդեցիկ տեղեկություն, որը հավելյալ կշիռ է տալիս սցենարի ուղերձին: Բացի այդ, մասնակիցներին դուր եկավ տներն անտառների պես անվտանգ դարձնելու գաղափարը. դա որակվեց ուժեղ ու հիշվող ուղերձ, որը կարող է արդյունավետորեն բարձրացնել իրազեկությունը:

Չնայած դրական կողմերին՝ սցենարը ստացավ որոշակի քննադատություն: Մասնակիցներից մի քանիսը համարեցին, որ պատումն անավարտ է ու չկապակցված՝ հատկապես անտառի և տան տեսարանների միջև շարունակականության սակավության պատճառով: Նրանք նշեցին, որ խաղաղ անտառից մթնեցված քաղաքային տեսարանին անցումն արդյունավետ չի փոխանցում անվտանգության ու վտանգի հակադրությունը: Տան վտանգավոր միջավայրը հստակ տեսողական պատկերներով չներկայացնելու պատճառով ուղերձը մնում է թերակատար և պակաս ազդեցիկ: Բացի այդ, անհասկանալի լինելու պատճառով քննադատության ենթարկվեց սցենարի լեզուն. որոշ մասնակիցներ համարեցին, որ տղամարդկանց ու վայրի կենդանիների համեմատությունը կարող է սխալ ընկալվել կամ չափազանց անգուր լինել: Մասնակիցները կարծիք հայտնեցին, որ ավելի ցայտուն պատկերներն ու տեսարանների միջև կապերը կնպաստեն ընդհանուր ուղերձն ուժեղացնելուն և հանդիսատեսին ավելի վերաբերելի դարձնելուն:

Գյումրիում մասնակիցներից ոմանք սցենարը որակեցին ինտրիգային՝ բարձր գնահատելով «տան» ու «անտառի» ստեղծագործ համեմատությունը: Ըստ նրանց՝ այս նմանաբանությունը կարող է ազդեցիկ լինել՝ հատկապես, եթե ուղեկցվի վիճակագրությամբ, որը ցույց կտա, որ որոշ անհատների համար անտառը կարող է ավելի ապահով լինել, քան իրենց տունը: Այս համեմատությունը համարվեց մտածելու տեղիք տվող, որն ունի ընտանեկան բռնության դաժանությունն արդյունավետ ընդգծելու ներուժ: Նշվեց նաև այն միտքը, որ սցենարը կարող է գրավիչ լինել, եթե նկարահանվի ուժեղ ռեժիսորական հմտություններով, ինչը հուշում է, որ տեսողական կատարումն առանցքային դեր կխաղա ուղերձն ազդու փոխանցելու գործում: Այս մասնակիցները համարեցին, որ համեմատությունն արդարացված է և կարող է հաջողությամբ բարձրացնել իրազեկությունն այն տարածքների թաքնված վտանգների մասին, որոնք պետք է որ անվտանգ լինեն:

Չնայած այս դրական տեսակետներին՝ սցենարն արժանացավ նաև

զգալի քննադատության՝ համեմատած այլ սցենարների հետ ավելի պակաս հստակության և տեղեկատվության համար: Միշարք մասնակիցների հասկանալի չէր «տան» ու «անտառի» համեմատությունը, ուստի գաղափարն ու ուղերձը համարեցին անհստակ: Նշված նմանաբանությունը ոչ բոլորի մեջ արձագանք գտավ, քանի որ ոմանք համարեցին, որ տեղին չէ տունը, որն ավանդաբար համարվում է անվտանգ վայր, համեմատել անտառի հետ: Հատկապես արական սեռի մասնակիցներից մեկը կտրականապես մերժեց համեմատությունը՝ պնդելով, որ տունը միշտ պետք է համարվի բոլորի ամենաանվտանգ վայրը, և այս համոզմունքի վիճարկումը կարող է խարխուլել հասարակության արժեքները: Բացի այդ, մտահոգություն հնչեց կանանց որպես ակնհայտ զոհեր ներկայացնելու վերաբերյալ: Երբ մի տղամարդ մասնակից կարծիք հայտնեց, որ դա կարող է հանգեցնել նրան, որ կանայք իրենց թիրախավորված ու զոհարկված զգան, մի կին մասնակից հակադարձեց, որ կանանց որպես զոհ ներկայացնելն էական է, քանի որ այն արտացոլում է հայաստանյան իրականությունը, որում կանայք ավելի հաճախ են դառնում ընտանեկան բռնության զոհ: Նա պնդեց, որ կանանց որպես զոհ ցույց տալն ուղերձն ավելի վերաբերելի և ազդեցիկ կդարձնի տեղական համատեքստում:

Վանաձորում մասնակիցներն արժևորեցին սցենարի վերջում գործնական աջակցության ռեսուրսների ներառումը, ինչպիսիք են թեժ գծերն ու հղումները՝ շեշտելով դրա կարիքն ունեցողներին շոշափելի օգնություն ցուցաբերելու կարևորությունը: Վիճակագրությունը, որի համաձայն՝ «100 կնոջից 15-ը ենթարկվում է ընտանեկան բռնության», որակվեց իբրև վիճահարույց, քանի որ ընտանեկան բռնության հետ բախվում են բազմաթիվ կանայք, և հատկապես Հայաստանում այդ թիվը կարող է ավելի մեծ լինել: Սա խոսում է այն մասին, որ հայ հասարակությունում ընտանեկան բռնության մասին կա՛մ հաղորդում քիչ է տրվում, կա՛մ բազմաթիվ զոհեր լռում են: Հետևաբար, վիճակագրությունը, իսկապես, վիճահարույց է:

Մասնակիցները բաժանվեցին երկու հակընդդեմ խմբի. նրանք, ովքեր համարեցին, որ «Տունը դարձնենք անտառից անվտանգ» այլաբանությունն ու գաղափարը շատ հստակ են, և նրանք, ովքեր կտրականապես չհամաձայնեցին՝ համարելով այս գաղափարը թույլ ու անհասկանալի: Որոշ մասնակիցներ պնդեցին, որ վայրի կենդանիները մարդկանց վրա ավելի հազվադեպ են հարձակվում, քան կանայք տանը ենթարկվում են տղամարդկանց բռնությանը, այդ իսկ պատճառով տունն անտառի հետ համեմատելը տրամաբանական է: Մյուս կողմից, մասնակիցներից ոմանք հռետորական հարց տվեցին. «Ինչու՞ պետք է տունն անտառից ավելի անվտանգ լինի»՝ դրդելով խորհելու, որ «տունը միշտ պիտի ամենաանվտանգ վայրը լինի, ինչն ինքնըստիներքյան հասկանալի պիտի լինի»:

Մի քանի մասնակիցներ նշեցին, որ չեն տարածի այս սցենարով

Նկարահանված տեսանյութը՝ հաշվի առնելով, որ, թեև սցենարն իրենց մասամբ հասկանալի է, իրենց ընկերներն ու ծանոթներն այն կարող են սխալ ընկալել:

Եզրակացություն

Երևանի, Գյումրիի և Վանաձորի մասնակիցները միասնաբար բարձր գնահատեցին անտառի անվտանգության և տան, որտեղ տեղի է ունենում ընտանեկան բռնությունը, վտանգների համեմատությունը: Բոլոր երեք քաղաքներում վայրի կենդանիների մեջ ավելի ապահով զգալու այլաբանությունն ուժեղ արձագանք գտավ՝ հղելով հզոր ու մտածելու տեղիք տվող ուղերձ, որն ընդգծեց ընտանեկան բռնության դաժանությունը: Վիճակագրությունը, ըստ որի՝ «100 կանանցից 15-ը ենթարկվում է ընտանեկան բռնության», հաճախ որակվեց որպես ազդեցիկ, պատումին զգալի կշիռ հաղորդող և այն տարածքների թաքնված վտանգները երևակող, որոնք պետք է որ անվտանգ լինեին: Այս քաղաքների մասնակիցները նաև արժևորեցին սցենարի վերջում գործնական աջակցության ռեսուրսների ներառումը, ինչպիսիք են թեժ գծերը՝ ընդունելով դրանց կարևորությունը ԳԲ-ից տուժածներին օգնություն տրամադրելու հարցում:

Մյուս կողմից, կարևոր տարբերություններ ի հայտ եկան սցենարի ընկալման հարցում: Երևանում մասնակիցները պատումը քննադատեցին որպես անավարտ ու չկապակցված՝ նշելով, որ անտառից տուն անցումն արդյունավետ չի փոխանցում անվտանգության ու վտանգի միջև ենթադրվող հակադրությունը: Նրանք համարեցին, որ անվտանգ տան միջավայրը հստակ տեսողական պատկերներով չներկայացնելը թուլացնում է ընդհանուր ուղերձը: Գյումրիում կարծիքները բաժանվեցին. մինչ որոշ մասնակիցներ հավանության արժանացրին նմանաբանությունը, մյուսներն այն համարեցին անհասկանալի և անպատշաճ՝ կարծելով, որ տունն անտառի հետ համեմատելը նսեմացնում է տունն ամենաանվտանգ վայրը համարելու ավանդական մոտեցումը: Գյումրիի քննարկումը եզակի էր, քանի որ միակ քաղաքն էր, որը ներառում էր արական սեռի մասնակիցների՝ վերհանելով այլ դինամիկա, քան Երևանի ու Վանաձորի քննարկումները, որոնց բոլոր մասնակիցները կանայք էին: Գյումրիի տղամարդիկ նշեցին, որ նման համեմատությունները մարտահրավեր են նետում հասարակական արժեքներին, մինչդեռ կանայք պաշտպանեցին այդպիսի պատկերումը՝ որպես Հայաստանում ընտանեկան բռնության իրավիճակի ճշգրիտ արտացոլում: Վանաձորի մասնակիցները «Տունը դարձնենք անտառից անվտանգ» այլաբանության հարցում բաժանվեցին նույն կերպ: Ոմանք դա համարեցին հստակ ու տրամաբանական համեմատություն, իսկ ոմանք որակեցին թույլ կամ ակնհայտ՝ պնդելով, որ ավելի լայն լսարանն այն կարող է սխալ ընկալել:

Քննարկումներից հետո սցենարում արվեցին փոփոխություններ՝ հայտնաբերված բացերը վերացնելու համար: Տնային վտանգավոր միջավայրի

հստակ տեսողական պատկերման բացակայությունը լրացվեց ֆոնային ձայների ներմուծմամբ՝ ակնարկելով տեղի ունեցող բնություն, և միևնույն ժամանակ՝ խուսափելով բացահայտ պատկերումից՝ կանխելու համար տրավմայի վերաենթարկելը և բնությունը նորմալացնելը: Կոալիցիայի մոտեցումը շեշտը դնում է բնության ցուցադրումը նվազագույնի հասցնելու վրա և փոխարենը կենտրոնանում է զորեղացնող ուղերձների և լուծումների վրա: Ազդեցիկ վիճակագրությունն էլ ավելի ուժեղացվեց տեսողական ներկայացմամբ՝ ընդգծելով կանանց հանդեպ ընտանեկան բնության տարածվածությունը: Չղկվեց սցենարի ավարտը, որպեսզի խրախուսի դիտողներին աջակցության թեժ գծերի մասին տեղեկությունը տարածելու միջոցով ակտիվորեն նպաստել տունն անտառից անվտանգ դարձնելուն. այսպիսով ուշադրությունը տեղափոխվեց համայնքային գործողությունների և գործնական աջակցության վրա:

Սցենար 4. Իմացի՛ր գեղեցիկին բռնության տեսակները

ԱՌԱՋ

[Տեսարան. կնոջ դեմք, մոտիկից կադր, խոսում է տեսախցիկի առջև]:

Կին. «Ես հրաժարվում եմ հանդուրժել մի իրականություն, որտեղ կանանց նկատմամբ բռնությունը նորմ է»:

[Սպիտակ Էկրանի կենտրոնում հատ առ հատ հայտնվում, ապա անհետանում են հետևյալ բառերը՝ որպես բռնության դրսևորումներ].

1. Բռնացքով հարվածել
2. Ոտքով հարվածել
3. Հրել
4. Թքել
5. Խեղդել
6. Հայհոյել
7. Նվաստացուցիչ մեկնաբանություններ անել
8. Մեկուսացնել ընտանիքից
9. Մեկուսացնել ընկերներից
10. Արգելել դուրս գալ
11. Արգելել հանդիպել մարդկանց
12. Արգելել բանկային հաշիվ ունենալ
13. Արգելափակել համատեղ հաշվին մուտքը
14. Վերահսկել անձնական հեռախոսը
15. Վերահսկել սոցիալական ցանցերը
16. Սպառնալ վնասել երեխաներին
17. Սպառնալ վնասել ընտանի կենդանիներին
18. Սպառնալ հայտնել սեռական կողմնորոշման մասին
19. Սպառնալ հանրայնացնել Էրոտիկ բնույթի անձնական նկարներ կամ խոսակցություններ

Կին. «Ես հավատում եմ այն ապագային, որտեղ յուրաքանչյուր կին իրեն ապահով, հարգված և գնահատված է զգում»:

[Անցում դեպի տեսարաններ, որտեղ մարդիկ հավաքվում են, գործողություններ են ձեռնարկում բռնությունը կանխելու և վերապրածներին աջակցելու համար և, իհարկե, այնտեղ ներկա է ոստիկանը]:

Կռալիցիան որոշեց փոխել քարոզարշավի իր ավանդական մոտեցումը, որը կենտրոնանում էր հարգալիր, զորեղացնող և լուծումներ առաջարկող բովանդակության վրա, և անցնել ԳԲ-ի տեսակների վերաբերյալ կոնկրետ

առարկայական տեղեկություն տրամադրելուն: Այս որոշումը հետևանք էր թարմ հետազոտությունների, որոնք ցույց էին տալիս, որ բազմաթիվ կանայք դժվարանում են ճանաչել ԳԲ-ի տարբեր ձևերը և որոշակի վարքագծեր ընկալել որպես բռնություն: Կոալիցիան մտահոգված էր, որ բռնության` տարիներ տևած նորմալացումը հանգեցրել է նրան, որ որոշ ձևեր անտեսվում կամ չեն ճանաչվում մեծացնելով այդ տեսակների աննկատ մալուռ ռիսկը: Արդյունքում, բռնության տարբեր ձևերը թվարկող սցենարը փոխակերպվեց հանրային ծառայության կարճ հայտարարության, որի նպատակն էր կանանց, աղջիկներին և ավելի լայն հասարակությանը կրթել ԳԲ-ի տարբեր տեսակների վերաբերյալ` ապահովելով, որ դրանք հստակորեն հասկացվեն և ճանաչվեն:

Երևանում մասնակիցները բարձր գնահատեցին սցենարի հստակությունը և այն, թե ինչպես է ընդգծում բռնության տարբեր ձևերը, որոնք հաճախ անտեսվում կամ սխալ են ընկալվում: Նրանք համարեցին, որ կոնկրետ բռնի վարքագծերի թվարկումը, ինչպիսիք են ֆինանսները վերահսկելը կամ տեղաշարժը սահմանափակելը, արդյունավետ միջոց է ընտանեկան բռնության տարբեր դրսևորումների վերաբերյալ հանդիսատեսին կրթելու համար: Սցենարը նաև գովաբանվեց իր ուղիղ լեզվի համար, որը որակվեց իբրև մատչելի և դյուրըմբռնելի: Բացի այդ, որոշ մասնակիցներ արժևորեցին սցենարի ազդու բացման խոսքը և այն ուղերձը, որ բռնության կանխարգելումը սկսվում է անհատական գործողություններից` բնորոշելով դա որպես զորեղացնող և մոտիվացնող:

Մյուս կողմից, որոշ մասնակիցներ համարեցին, որ սցենարը չափազանց նման է ցանկի և կարող է իր բազմաթիվ կետերով ծանրաբեռնել հանդիսատեսին, ուստի խորհուրդ տվեցին որոշ կետեր խմբավորել կամ պարզեցնել` ավելի լավ ազդեցության համար: «Այն սկսվում է մեզանից» արտահայտությունը քննադատվեց անորոշ լինելու համար, ուստի առաջարկվեց ավելի կոնկրետացնել կամ կոնկրետ գործողության հետ կապել: Տարաբնույթ արձագանքների տեղիք տվեց սցենարում ուստիկանության ներառումը, և մտահոգությունն հնչեց նման իրավիճակներում իրավապահների ոչ զգայուն և անիրազեկ պահվածքի հետ կապված: Բացի այդ, արձագանքներ եղան, որ սցենարին կարող է օգուտ բերել ոչ թե զուտ տեքստը, այլ տեսողական պատկերումը` ուղերձը դարձնելով ավելի գրավիչ ու ազդեցիկ: Որոշ մասնակիցներ նաև նշեցին, որ սցենարը, առանց հանդիսատեսի հետ ավելի անձնական կամ հուզական կապի, կարող է չափազանց վերացական կամ կտրված թվալ, ինչը հուշում է, որ լեզուն կարող է ավելի անձնականացված լինել, որպեսզի ուղերձն ավելի խորն ազդի:

Գյումրիում մասնակիցներն ընդհանուր առմամբ բարձր գնահատեցին այն ուղերձը, որը սցենարը նպատակ ուներ փոխանցելու` գիտակցելով բռնության տարբեր ձևերի մասին իրազեկության բարձրացման կարևորությունը: Հատկապես արժևորվեց «Ես հրաժարվում եմ հանդուրժել մի իրականություն,

որտեղ կանանց նկատմամբ բռնությունը նորմ է» արտահայտությունը, քանի որ այն արձագանք գտավ մշակութային համատեքստում, որում զոհերը բռնությանը հաճախ դիմանում են հանուն ընտանիքի կամ երեխաների: Բռնության տարբեր ձևերն արտացոլելու գաղափարը համարվեց լուսավորող՝ հատկապես մատնանշելու համար այնպիսի գործողությունները, ինչպիսիք են զուգընկերոջ հեռախոսը ստուգելը, որոնք ավանդաբար կարող են չհամարվել բռնի: Որոշ մասնակիցների կարծիքով այս ասպեկտների շեշտադրումը կարող է օգնել ընդլայնելու հանրության ընկալումը, թե ինչ է բռնությունը, և ավելի շատ մարդկանց քաջալերելու՝ ճանաչել և մերժել բռնի վարքագիծը:

Չնայած սցենարի ուղերձը դրական ընդունելուն՝ մտահոգություններ ինչեցին դրա կատարման վերաբերյալ: Շատերը համարեցին, որ բռնության բոլոր 19 ձևերն առանձին ցուցադրելը ճնշող կլինի, ուստի առաջարկեցին կիրառել գործողություններ՝ ուղերձն ավելի հետաքրքրական դարձնելու համար: Քննարկվեց նաև ոստիկանի դերը. մասնակիցները կարծիք հայտնեցին, որ միայն նրա ներկայությունը ցույց տալը բավարար չէ, և առաջարկեցին փոխարենը ներկայացնել նրա ակտիվ միջամտությունը: Նշվեց, որ ոստիկանները հաճախ պաշտպանում են բռնարարին, ուստի սցենարը պետք է ներառի ուղերձներ, որոնք իրավապահներին կխրախուսեն աջակցել զոհերին: Քննադատության ենթարկվեց կանանց բացառապես որպես թույլ զոհ ներկայացնելը, և առաջարկվեց ցուցադրել ուժեղ կանանց, որոնք դիմադրում են: Ի վերջո, մասնակիցներն ընդգծեցին ընտանեկան բռնությունը և կանանց նկատմամբ բռնությունը տարբերակելու կարևորությունը, քանի որ դրանք միշտ չէ, որ նույնն են:

Վանաձորում մասնակիցները համաձայնեցին, որ սցենարի բովանդակությունը հստակ է ու դյուրըմբռնելի, և գնահատեցին պարզ լեզուն: Ոստիկանին պատկերող հատվածը զգալիորեն ազդեց մասնակիցների վրա թե՛ բացասական, թե՛ դրական առումներով: Ոմանք պնդեցին, որ սցենարում ոստիկանի ներառումն ավելորդ է, իսկ մյուսները՝ հակառակը: Խնդիրն այն է, որ ոմանք կարծում էին, որ հասարակությունը չի վստահում ոստիկանությանը, ինչը նվազեցնում է սցենարի արդյունավետությունը: Իսկ մյուս խումբը կարծում էր, որ ոստիկանի ներկայությունը կարող է օգնել փոխել կամ նվազեցնել ոստիկանների մասին թյուրընկալումները: Սա հստակ արտահայտում է հայ հասարակության վերաբերմունքը ոստիկանության նկատմամբ:

Մասնակիցների մեծամասնությունը նշեց, որ սցենարի տեքստի ազդեցությունը բացասական է, քանի որ շատ ցուցակատիպ է, և իր չափից շատ կետերով կարող է ճնշել հանդիսատեսին: Ոմանք առաջարկեցին կրճատել ցուցակը (որում նշված են բռնության ձևերը) կամ խմբավորել կետերը: Մասնակիցները նշեցին, որ հանդիսատեսին դժվար կլինի մարսել բոլոր 19 կետերը: Բացի այդ, եղան արձագանքներ, որ սցենարը կշահի, եթե վերջում ներառվեն նաև գործնական

աջակցության ռեսուրսները, ինչպիսիք են թեժ գծերն ու հղումները:

Եզրակացություն

Ընդհանուր առմամբ, մասնակիցները դժգոհություն հայտնեցին սցենարի բաց ավարտից՝ նախընտրելով հստակ ու եզրափակող, այլ ոչ թե մեկնաբանելուն թողնված ավարտը: Պատումի մեջ տեղ գտած՝ բռնության տեսակների ծավալուն ցանկն ընկալվեց որպես ճնշող և հաճախակի առաջ բերեց բացասական հույզեր՝ խոչընդոտելով ուղերձի հիշվելուն: Իրավապահ մարմինների, մասնավորապես՝ ոստիկանության պատկերումը շփոթմունք առաջացրեց, քանի որ մասնակիցները փորձում էին նրանց ներկայությունը տեղավորել քարոզարշավի ենթադրյալ ուղերձում, ինչը հակասում էր իրավապահների դերից իրենց ակնկալիքներին: Այս քննադատությունները վերհանեցին բռնությունը բացահայտ ներկայացնելու հետ կապված ավելի լայն հասարակական անհանգստությունը և ավելի նուրբ ու զգայուն փաթեթավորմամբ ուղերձներին նախապատվություն տալը: Այս արձագանքը համահունչ էր Կոալիցիայի՝ հզորացնող, լուծում առաջարկող քարոզարշավ տանելու մոտեցմանը, ինչը բերեց կոնկրետ այս սցենարից հրաժարվելու որոշմանը:


Սցենար 5. Քա դու՞ ով ես

ԱՌԱՋ	ՅԵՏՈ
<p>Տեսարան. Երևանի փաբերի եռանկյունում՝ գիշերային ակումբային եռուզեռ, խմիչք, բարձր երաժշտություն:</p> <p>Բարմենի դիմաց նստած է երիտասարդ կին և խմում է ռոմ կամ այլ ոգելից խմիչք:</p> <p>Աղմուկի մեջ տեսարանը մշուշոտում է՝ կարծես տեսախցիկը կնոջ աչքով նկարի իրականությունը: Տեսախցիկը ճոճվում է, երբ կինը փորձում է ոտքի կանգնել:</p> <p>Անձանոթ երիտասարդն արագ քայլով մոտենում է կնոջը, որպեսզի ակումբից դուրս ուղեկցի:</p> <p>Կադրը փոխվում է դեպի մի խումբ երտասարդներ, որոնք ակտիվ խոսում, շփվում են միմյանց հետ: Խմբից մի երիտասարդ աղջիկ հայացքն ուղղում է երիտասարդին, և դեմքին անհագստություն է հայտնվում: Աղջիկը սկսում է երկմտել՝ արդյո՞ք մոտենալ երիտասարդին, թե՞ ոչ: Խումբը շարունակում է զվարճանալ: Աղջիկը վճռական որոշում է ընդունում, առանձնանում է խմբից և մոտենում տղամարդուն ու կնոջը:</p> <p>Գեղեցիկ հագնված, վառ շպարով, կարմիր շրթներկով, շատ նրբագեղ արտաքինով երիտասարդ կինը մոտենում է երկուսին ու պատրաստվում դիմել երիտասարդ տղամարդուն:</p> <p>Դեմքը կտրուկ շրջում է դեպի կինն ու ասում՝ «ընկերդ ա՞»:</p> <p>Անցում սպիտակ Էկրանին:</p> <p>«Սեռական բռնության միակ մեղավորն ու պատասխանատուն բռնարարն է»</p> <p>Յետո այս տեքստը մարում է սպիտակ Էկրանին, ապա աստիճանաբար հայտնվում է՝</p>	<p>Տեսարան. Երևանի փաբերի եռանկյունում՝ գիշերային ակումբային եռուզեռ, խմիչք, բարձր երաժշտություն:</p> <p>Բարմենի դիմաց նստած է երիտասարդ կին և խմում է ռոմ կամ այլ ոգելից խմիչք:</p> <p>Աղմուկի մեջ տեսարանը մշուշոտում է, կարծես տեսախցիկը կնոջ աչքով նկարի իրականությունը: Տեսախցիկը ճոճվում է, երբ կինը փորձում է ոտքի կանգնել:</p> <p>Անձանոթ երիտասարդն արագ քայլով մոտենում է կնոջը, որպեսզի ակումբից դուրս ուղեկցի:</p> <p>Կադրը փոխվում է դեպի մի խումբ երտասարդներ, որոնք ակտիվ խոսում, շփվում են միմյանց հետ: Խմբից մի երիտասարդ կին հայացքն ուղղում է երիտասարդին, և դեմքին անհագստություն է հայտնվում: Կինը սկսում է երկմտել՝ արդյո՞ք մոտենալ երիտասարդին, թե՞ ոչ: Խումբը շարունակում է զվարճանալ: Կինը վճռական որոշում է ընդունում, առանձնանում է խմբից և մոտենում տղամարդուն ու կնոջը:</p> <p>Գեղեցիկ հագնված, երիտասարդ կինը մոտենում է երկուսին ու պատրաստվում դիմել երիտասարդ կնոջը:</p> <p>Դեմքը կտրուկ շրջում է դեպի տղամարդն ու ասում՝ «դու ո՞վ ես»:</p> <p>Տղամարդը կնոջը զայրացած պատասխանում է. «Քա դու՞ ով ես»:</p> <p>Կինը պատասխանում է. «Ե՛ս... ընկերուհին, իսկ այ քեզ դեռ կպարզենք...»</p> <p>[Բջջայինով հավաքում է 1-02]:</p> <p>Էկրանին հայտնվում է գրառում. «Սեռական բռնության մեղավորն ու պատասխանատուն բռնարարն է»</p>

Նորմերը խախտելու համար հաճախ անհրաժեշտ է փոփոխել դերերը կամ անակնկալի բերել հանդիսատեսին՝ մատուցելով պատումներ, որոնք մարտահրավեր են նետում հասարակական կողմնակալությանը: Հայաստանում վերջերս անցկացված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ «մաքուր» աղջկանից,

ինչպես հասարակությունը հաճախ պիտակում է երիտասարդ կանանց, ակնկալվում է պահպանել վարքագծային խիստ նորմեր. այդպիսի աղջիկը չի հաճախում գիշերային ակումբներ կամ զվարճանքի այլ վայրեր, խուսափում է ոչ իր ընտանիքի անդամ տղամարդկանց հանդիպելուց և իր գործունեությունը սահմանափակում է համալսարան կամ աշխատանքի գնալով: Փոխարենը, սպասվում է, որ նա իր ժամանակն անցկացնի տանը կամ ընտանիքի հետ՝ մշտական հսկողության ներքո¹³:

Կոալիցիան այս բացահայտումներն օգտագործեց գիշերային ակումբում երիտասարդ կանանց պատկերող սցենարը մշակելու համար՝ նպատակ ունենալով սասանել նման տարածքներին առնչվող տաբուն և ցույց տալ, որ ոչ միայն բնական է կանանց ներկայությունն այս միջավայրերում, այլև՝ որ կանայք կարող են լինել փոփոխության հզոր գործորդներ՝ ունակ լուծելու բարդ խնդիրներ: Շատ լավ գիտակցելով, որ այս մոտեցումը կարող է հակասություններ առաջացնել, Կոալիցիան ընդունեց ռիսկը՝ հասկանալով, որ սասանումը հաճախ ենթադրում է մտքերի հրահրում և խորապես արմատավորված կողմնակալության վիճարկում: Նրբորեն մշակվելու դեպքում սցենարը կարող է դրական արձագանք առաջ բերել, սակայն չարաշահելու դեպքում կարող է լուրջ հակազդեցություն առաջացնել:



Գրաֆիկը ցույց է տալիս, որ մասնակիցների մեծ մասը նշել է, որ սցենարի լեզուն, բառերն ու նախա-դասությունները պարզ են: Մասնակիցների գրեթե կեսը համաձայնել է, որ սցենարը հստակ է և դյուրըմբռնելի: Ընդհանուր առմամբ, մասնակիցները հավանել են այն: Հուզական տեսանկյունից մասնակիցներից շատերը որևէ կերպ չեն պատասխանել կամ որոշել, թե արդյո՞ք սցենարը հարգալիր է, զգայուն, կամ հանգստաբեր: Այնուամենայնիվ, որոշ չափով հակասական է, որ շատերը համաձայնել են, որ կտարածեն այս սցենարով նկարահանված տեսանյութը:

13 <https://womenfundarmenia.org/բարոյականություն-և-սեռականություն/>

Մյուս կողմից, պատասխանները հստակ ցույց են տալիս, որ մասնակիցների մեծամասնությունը համարել է, որ սցենարն իրենց որևէ նոր տեղեկություն չի հաղորդում, ինչով պակաս հետաքրքիր է դառնում: Բացի այդ, գրաֆիկի «Ահա՛-գործոնը» ցույց է տալիս, որ բազմաթիվ մասնակիցների տեսանկյունից բովանդակությունը ո՛չ ազդեցիկ է, ո՛չ էլ օգտակար:

Երևանում մասնակիցները գնահատեցին սցենարի հստակ և ուղիղ լեզուն, ինչը հեշտացնում է ուղերձի ըմբռնումը: Նաև համարեցին, որ իրավիճակը վերաբերելի է, հատկապես կնոջ կերպարը, որը նկատեց հնարավոր վտանգն ու վարանեց՝ արդյո՞ք միջամտի, թե՞ ոչ: Վարանելու և որոշումն ընդունելու այսպիսի իրատեսական պատկերումն արձագանք գտավ մասնակիցների շրջանում: Բացի այդ, գլխավոր ուղերձը՝ «սեռական բռնության միակ մեղավորն ու պատասխանատուն բռնարարն է», բնորոշվեց որպես ուժեղ և կարևոր կետ, որը վերջնական տեսանյութում կարիք ունի ավելի ցցուն շեշտվելու:

Մյուս կողմից, մասնակիցները կարծիք հայտնեցին, որ սցենարը չի առաջարկում որևէ նոր պատկերացում կամ տեղեկություն, ինչով նվազում է դրա ազդեցիկությունը: Միջամտող կնոջ ու տղամարդու փոխազդեցությունը համարվեց չափազանց անորոշ, որը կարիք ունի ավելի կոնկրետ գործողությունների ու ավելի հստակ հանգուցալուծման: Նաև մտահոգություն հնչեց, որ մշակութային համատեքստը գուցե լիովին պատրաստ չլինի ընդունելու բարում հարբած կնոջ կերպարը՝ ազդելով նաև ուղերձի արդյունավետության վրա: Եվ վերջապես, որոշ մասնակիցներ առաջարկեցին, որ սցենարը պետք է անդրադառնա նաև դիտորդների պատասխանատվությանը, որոնք ականատես լինելով նման իրավիճակներին՝ նախընտրում են լռել, մինչդեռ նրանց անգործությունը նպաստում է խնդրին:

Գյումրիում մասնակիցները բարձր գնահատեցին սցենարի փորձը՝ մարտահրավեր նետելու հասարակական կարծրատիպերին, ինչպես, օրինակ, այն մտայնությանը, որ «վառ շպարով ու գեղեցիկ հագնված աղջիկը» նույնացվում է մարմնավաճառ լինելու հետ: Բացի այդ, տեսարանը, երբ մեկ այլ կին միջամտում է՝ հարցնելով՝ «ընկերդ ա՞», որակվեց իբրև զգոն լինելու և հնարավոր բռնությունը կանխելուն ուղղված քայլ անելու դրական օրինակ: Ուշադրության այս ժեստը շեշտադրվեց որպես աջակցություն ցուցաբերելու և ուրիշներին վնասից պաշտպանելու լավ միջոց:

Սցենարը բախվեց քննադատության՝ «միակ մեղավորը բռնարարն է» ուղերձի մատուցման հարցում: Որոշ մասնակիցներ կարծիք հայտնեցին, որ այս ուղերձը չափազանց պարզունակ է, քանի որ այլ գործոններ նույնպես, ինչպիսիք են հասարակության խրախուսանքը կամ սադրանքը, կարող են նպաստել բռնի վարքագծին: Բանավեճ ծավալվեց «միայն» բառի շուրջ, քանի որ ոմանց պնդմամբ՝ արտաքին ազդեցությունները երբեմն կարող են հանգեցնել բռնության: Մի տղամարդ մասնակից նշեց, որ սադրանքները կարող են հանգեցնել բռնության

և ընդգծեց, որ կանայք նույնպես կարող սեռական բռնության ենթարկել: Մտահոգությունն հնչեց նաև սցենարի անհստակության կապակցությամբ, իսկ մասնակիցներից մեկը դժվարացավ ըմբռնել նախատեսված ուղերձը: Առաջարկ եղավ նաև պատկերելու մասնավոր տարածքներում, ինչպես, օրինակ, տներում տեղի ունեցող սեռական ոտնձգություն՝ ցույց տալու, որ դա չի պատահում միայն հանրային վայրերում, ինչպիսիք են բարերը կամ ակումբները: Մասնակիցներից մեկն առաջարկեց փոխել սցենարը՝ սեռական բռնության զոհին ներկայացնելով կարծրատիպային կերպարով՝ վառ շպարով ու նորաձև հագուստով՝ ընդգծելու այն միտքը, որ արտաքինը չի արդարացնում կամ չի հրահրում բռնություն՝ ուժեղացնելով այն ուղերձը, որ զոհերն իրենց տեսքով կամ հագուստով պատասխանատու չեն իրենց հետ պատահած բռնության համար:

Վանաձորում մասնակիցներն ընդգծեցին, որ սցենարի բովանդակությունը հստակ է և դյուրըմբռնելի, և հավանության արժանացրին ուղիղ լեզուն: Բազմաթիվ մասնակիցներ լիովին համաձայնեցին «սեռական բռնության միակ մեղավորն ու պատասխանատուն բռնարարն է» հիմնական պնդմանը, և որ ցանկացած տեսակի բռնություն կամ շահագործում պետք է լիարժեք պատժվի: Որոշ մասնակիցներ բարձրաձայնեցին, որ հասարակությունը հաճախ մեղադրում է զոհին, ոչ թե բռնարարին: Եվ ուրեմն՝ սա արդիական խնդիր է, որին պետք է ավելի հաճախ անդրադառնալ:

Մյուս կողմից՝ սցենարը բախվեց քննադատության: Շատերը կտրականապես չհամաձայնեցին «նրբագեղ կին» արտահայտությանը՝ նշելով, որ ցանկացածը կարող է բռնության զոհ դառնալ և կարիք չունի էլեգանտ կամ նրբագեղ լինելու: Բացի այդ, ոմանք քննադատեցին կնոջ՝ փաբում խմելու տեսարանը՝ այն համարելով առհասարակ անընդունելի: «Ինչպե՞ս կարող է երիտասարդ կինը փաբում մենակ խմել», - այս հայտարարությունը պարզորոշ արտացոլում է կանանց նկատմամբ հասարակության վերաբերմունքը, հատկապես՝ Հայաստանում:

Եզրակացություն

Երևանի, Գյումրիի և Վանաձորի մասնակիցները գովաբանեցին սցենարի հստակ և ուղիղ լեզուն, ինչն ուղերձը դարձնում էր դյուրըմբռնելի և վերաբերելի, հատկապես՝ Երևանում ու Վանաձորում: Կնոջ վարանելու և որոշում ընդունելու իրատեսական պատկերումը, երբ մտածում էր միջամտել-չմիջամտելու մասին, խոր արձագանք գտավ մասնակիցների շրջանում: «Սեռական բռնության միակ մեղավորն ու պատասխանատուն բռնարարն է» գլխավոր ուղերձը լայնորեն ընդունվեց իբրև վճռորոշ պնդում, հատկապես՝ Երևանում ու Վանաձորում, որտեղ այն համարվեց հզոր հակադարձում զոհին մեղադրելու (victim-blaming) դեմ: Համակարծրություն կար, որ ցանկացածը, անկախ արտաքինից ու վարքից, կարող է ենթարկվել սեռական կամ ընտանեկան բռնության, և սցենարը հաջողությամբ

ընդգծում է դա:

Այնուամենայնիվ, ի հայտ եկան ընկալման տարբերություններ: Երևանում մասնակիցները համարեցին, որ սցենարում քիչ են նոր պատկերացումները, ինչը նվազեցնում է դրա ազդեցությունը: Նշվեց, որ միջամտող կնոջ ու տղամարդու փոխազդեցությունն անորոշ է, և պահանջում է ավելի հստակ գործողություններ ու ավելի որոշակի հանգուցալուծում: Հնչեցին նաև մշակութային մտահոգություններ, մասնավորապես բարում հարբած կնոջ կերպարի վերաբերյալ՝ մտավախությամբ, որ այսպիսի պատկերը կարող է նսեմացնել ուղերձը հասարակական կողմնակալության պատճառով, որը նման վարքագիծը նույնացնում է ցածր վարքի կամ սեռական ակտին ավելի համաձայն լինելու հետ: Թեպետ Գյումրիում մասնակիցներն արժևորեցին հասարակական կարծրատիպերին սցենարի նետած մարտահրավերը, նրանք վիճարկեցին «միակ մեղավորը բռնարարն է» արտահայտությունը՝ համարելով, որ այն գերպարզունակացնում է խնդիրը՝ անտեսելով արտաքին ազդեցությունները, ինչպիսիք են հասարակական նորմերը կամ ենթադրված սադրանքները: Գյումրիի մասնակիցները նաև քննադատեցին սցենարի հստակությունը և հարցականի տակ դրեցին կանանց՝ հրապարակայնորեն խմելու պատկերումը, ինչը երևան հանեց ավելի լայն մշակութային անհանգստություն: Վանաձորում մասնակիցները հիմնականում հավանություն տվեցին սցենարի լեզվին, սակայն անհամաձայնություն հայտնեցին «նրբագեղ կին» արտահայտությանը՝ ընդգծելով, որ բռնությունը կախված չէ արտաքինից կամ վարքից:

Նախատիպացման արձագանքներից հետո «նրբագեղ կինը» փոխարինվեց մի կերպարով, որը մոտենում է զույգին և ուղղակիորեն առերեսվում տղամարդու հետ, ինչն առաջ է բերում վերջինիս զայրացած արձագանքը, և միջամտող կնոջը դրդում ոստիկանություն զանգել: Ուղերձը փոքր-ինչ փոփոխվեց, որպեսզի առանց ավելորդ շեշտադրումների՝ ուշադրության կենտրոնում պահի բռնարարի պատասխանատվության հարցը: Չնայած սպասվող մշակութային անհանգստությանը՝ սցենարը մեծամասամբ մնաց անփոփոխ՝ արժևորելով դրա սասանող բնույթը: Սցենարը հետագայում կհղկվի թողարկող թիմի հետ՝ ապահովելու, որ վիզուալ լուծումներն ուժեղացնեն նրա սադրիչ մտադրությունը և օգտագործեն հասարակական նորմերին մարտահրավեր նետելու ներուժը:

20. Bo, L., & Yating, P. (2023). Long-Term Impact of Domestic Violence on Individuals-An Empirical Study Based on Education, Health and Life Satisfaction. *Behavioral sciences (Basel, Switzerland)*, 13(2), 137. <https://doi.org/10.3390/bs13020137>
21. Born, Andreas and Ranehill, Eva and Sandberg, Anna, Gender and willingness to lead – does the gender composition of teams matter? (March 1, 2020). Available at SSRN: <http://dx.doi.org/10.2139/ssrn.3207198>
22. Brooks, O. (2008). Consuming Alcohol in Bars, Pubs and Clubs: A risky freedom for young women? *Annals of Leisure Research*, 11(3-4), 331–350. <https://doi.org/10.1080/11745398.2008.9686801>
23. Burns, C. (2018). Human-centred design. *EHealth Research, Theory and Development*, 207-227.
24. Christaki, V., Orovou, E., Dagla, M., Sarantaki, A., Moriati, S., Kirkou, G., & Antoniou, E. (2023). Domestic violence during women’s life in developing countries. *Materia Socio Medica*, 35(1), 58. <https://doi.org/10.5455/msm.2023.35.58-64>
25. EVN report “Those Who Speak Up: Combating Domestic Violence”, Susina Khachatryan, 2023 <https://evnreport.com/raw-unfiltered/those-who-speak-up-combating-domestic-violence/>
26. Fairbairn J. Before #MeToo: Violence against Women Social Media Work, Bystander Intervention, and Social Change. *Societies*. 2020; 10(3):51. <https://doi.org/10.3390/soc10030051>
27. Grigoryan, T. (2023). *Gender-based domestic violence perception*. Eurasia Partnership Foundation-Armenia. <https://shorturl.at/XYOe3>
28. Gunby, C., Carline, A., Taylor, S., & Gosling, H. (2019). Unwanted sexual attention in the Night-Time Economy: behaviors, safety strategies, and conceptualizing “Feisty femininity.” *Feminist Criminology*, 15(1), 24-46. <https://doi.org/10.1177/1557085119865027>
29. Vartanian, V. (2023, August 15) “ A Hidden Epidemic: Domestic Violence in Armenia” [Hetq.am](https://hetq.am/en/article/159066) <https://hetq.am/en/article/159066>
30. Heise L. L. (1998). Violence against women: an integrated, ecological framework. *Violence against women*, 4(3), 262–290. <https://doi.org/10.1177/1077801298004003002>
31. HM Government, 2013. Circular: new government domestic violence and abuse definition. London: Home Office. Available at: <https://shorturl.at/nmAgr>
32. Human Rights Watch “ World Report 2024: Armenia” (Violence Against Women/ Sexual Orientation and Gender Identity parts) <https://www.hrw.org/world-report/2024/country-chapters/armenia>
33. Kelly, L., & Westmarland, N. (2016). naming and defining “domestic violence”: lessons from research with violent men. *Feminist Review*, 112, 113–127. <http://www.jstor.org/stable/44987255>
34. Madhani, F. I., Karmaliani, R., Patel, C., Bann, C. M., McClure, E. M., Pasha, O., & Goldenberg, R. L. (2017). Women’s Perceptions and Experiences of Domestic Violence: An Observational Study From Hyderabad, Pakistan. *Journal of interpersonal violence*, 32(1), 76–100. <https://doi.org/10.1177/0886260515585533>
35. Muehlenhard, C. L., & Kimes, L. A. (1999). The social construction of violence: the case of sexual and domestic violence. *Personality and social psychology review : an official journal of the Society for Personality and Social Psychology, Inc*, 3(3), 234–245. https://doi.org/10.1207/s15327957p-spr0303_6
36. Nnyombi, A., Bukuluki, P., Besigwa, S., Ocaya-Irama, J., Namara, C., & Cislighi, B. (2022). How social norms contribute to physical violence among ever-partnered women in Uganda: A qualitative

- study. *Frontiers in sociology*, 7, 867024. <https://doi.org/10.3389/fsoc.2022.867024>
37. Patra, P., Prakash, J., Patra, B., & Khanna, P. (2018). Intimate partner violence: Wounds are deeper. *Indian journal of psychiatry*, 60(4), 494–498. https://doi.org/10.4103/psychiatry.IndianJPsychiatry_74_17
 38. Ruta Aidis, Sona Balasanyan, & Gohar Shahnazaryan (2019) USAID/Armenia Gender Analysis Report. Banyan Global. <https://doi.org/10.13140/RG.2.2.20295.04004>
 39. Siricharoen, W. V. (2023). Human centered design and design thinking for entrepreneurship. *EAI Endorsed Transactions on Context-aware Systems and Applications*, 9(1). <https://doi.org/10.4108/eetcasa.v9i1.3203>
 40. Spencer, B. (2022, September 13). *What is Human-Centered Design? 3 Phases, 4 Principles, and a Call-to-Action - Fresh Consulting*. Fresh Consulting. <https://www.freshconsulting.com/insights/blog/human-centered-design/>
 41. SUJATHA, D. (2014). Redefining Domestic Violence: Experiences of Dalit Women. *Economic and Political Weekly*, 49(47), 19–22. <http://www.jstor.org/stable/24481021>
 42. United Nations Children’s Fund. (n.d.). Attitudes and social norms on violence. UNICEF Data. Retrieved August 1, 2024, from <https://shorturl.at/W1Lv3>
 43. UN Women. (2023, December). New study shows social norms regarding violence against women are changing in Georgia. UN Women | Europe and Central Asia. <https://shorturl.at/f79lF>
 44. UNFPA. Men and Gender Equality in Armenia, 2016 and Guntzberger, M., Kostelny, K, and K. Onodoro. Caring for Equality Baseline Report, World Vision Armenia, March 2017.”
 45. Van Velsen, L., Ludden, G., & Grünloh, C. (2022). The limitations of user-and Human-Centered design in an eHealth context and how to move beyond them. *Journal of Medical Internet Research*, 24(10), e37341. <https://doi.org/10.2196/37341>
 46. Ziemer, U., & Roberts, S. P. (2024). Populist political masculinities, gender equality, and norm contestation in Armenia and Georgia. *International Feminist Journal of Politics*, 1–24. <https://doi.org/10.1080/14616742.2023.2298692>

